



**ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ,
ԳՐԱՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԱԼՄԱՆԱԽ**

891.99-8
7-69

**ԱԶՈՎ-ՍԵՎՇՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

1 — 9 — 3 — 4

Հ. 3-2682

891-99-82
7-69

ՄՐՈՒԵՍԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ

ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ

3510

Գ.Ս.Ե. Ե ՎՆԳՐ.
Մ, 1934 Գ.
ԱԿՏ. № 204

ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ
ԳՐԱԲՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԱԼՄԱՆԱԻ
Հ. Կ. Հ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐՈՂՆԵՐԻ



Ս Կ Ի Զ Բ

1.

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՈՒԹՆՅԱԿՆԵՐ

Այն զնգզնգուն
Զանգուն,
Վոր վոյսեր է
Հաւփում,
Խալարք փչում է
Վոնց փոփ
Զոր...

ՅԵՐԵՎԱՆ

Վողջճւյն, վողջճւյն Յերեվանին,
Վարպետներին քարի, փոշու,
Զավոզներին, նոր տներին,
Փողոցներին զարդ ու կանաչ,
Տրամվային սովետական,
Այդ մեծ գործի հերոսներին —
Սովետական պոետներին
Վողջճւյն, վողջճւյն:

ՍԵՎԱՆ

Յերազ կամ միֆ, ո՛հ, ցնորք չե,
Իզուր ներքուզ դովասանք չե,
Վոր այն խոր ձորերի միջում
Նշեկտրական հողմ է փչում:
Մխաճն է այնտեղ սիրով տոկում,
Մարդն է այնտեղ, ձեռքն է ձկուն,
Վոր զանգուն լուռ, յեղը յերի —
Կամպը լուս է գյուղը մանի:

Խմբագրեց — Հ. ՊՈՏԵՆՅ
Կազմեց — Ա.Բ. ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ



40610-63



* * *

Я люблю вас
Но живого.
А не мумию.

Вл. Маяковский

Վորպես նվեր յերկու կարմիր նուան հաս,
Յես դեռ մանուկ քեզ գրեցի յերկու տող —
Յե՛վ պարուրված քո յերգերով անվհատ,
Քո հետևից ճամբա յերա սրտագող:

Վորպես տրուբադուր շուտ դասակարգի,
Լապտերի պես անշեջ մի հուր խավարում —
Քորք յերգերով, սուր սուսերով անց կացար,
Արնաշաղաղ գոռ պայքարի դիրքերում:

Յես արթնացա...
Յես վեր յերա խանձուրներից մանկական,
Քո ուղիով, հարբած քո վառ յերգերով,
Յես յերգեցի քո յերգերն առնական:

Յես յերգեցի...
Յե՛վ իմ յերգը, ո՛ր, իմ ձայնը ո՛ր գնաց
Լուսնաշաղաղ գիշերային խավարում —
Յերգիդ քողոցը տաղն իմ հոգում վառ մնաց:

Յե՛վ յերգելով, քե՛ֆ անելով դու անցար,
Սիրով հարբած... դե՛ռ զուռնով դու անցար —
Լապտերի պես, անշեջ մի հուր խավարում,
Զուռնեն քոքած, նաղարայով դու անցար:

Վորպես նվեր յերկու կարմիր նուան-հաս,
Յես դեռ մանուկ քեզ գրեցի յերկու տող —
Յե՛վ պարուրված քո յերգերով անվհատ,
Քո հետևից ճամբա յերա սրտագող:

Հ. ԱՎԱԳՅԱՆ

ՄԱՀԱՊԱՏԻԺ

(ՀՈՒՇԵՐ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆԻՑ)

1920 թվի փետրվար ամսին Բաղդատում հարցաքննելուց հետո — անգլիական ղինվորական հրամանատարության կարգադրությամբ, ինձ Միջագետքի անապատներով քաշ-քշելուց և մի առ ժամանակ բանտում նստեցնելուց հետո — Բաղուրայում, Ամբարայում, Կուտել-Նմարայում, Աշարում — վերջապես բերում են Բասրա և փակում ղինվորական հաուպտվախտում:

Անգլիացիները ղինվորական բանտը հատկապես կառուցել էյին քաղաքից հեռու, վորանց կենտրոնացած էյին նրանց ղինվորական բոլոր հիմնարկությունները, զորանոցներն ու պահականոցները: Բանտը մի հարկանի ամուր շենք էր, վորը բարձրանում էր մի բնդարձակ տարածության մեջ: Նա ուներ խաչածե միջանցքներ և բաժանված էր հիսուն փոքրիկ վանդակների, ցեմենտած հատակով, վորոնք բոլորն էլ դատարկ էյին: Պատուհանի փոխարեն, միջին պատի ամենավերին մասում՝ քառորդ մետրանոց մի բացվածք էր թողնված, յերկաթե վանդակով ամրացրած: Յերկաթե ամուր վանդակապատ դռները հիշեցնում էյին գազանանոցը և հենց ամբողջ բանտն այնպես էր կառուցված, վոր ամեն բանով նման էր գազանանոցի և նրա վանդակներում, մարդկանց փոխարեն, կարելի չէր վայրի գազաններ պահել:

Միջանցքի կենտրոնում կար մի լուսավոր կլոր հրապարակ, վորն ուներ զմբեթածե, ապակյա առաստաղ՝ պա-

տերին ապակյա պահարաններով, վորտեղ շարքերով կախ-
ված էյին շղթաներ, կալաններ, թուկեր, յերկաթալարեր,
մտրակներ և նման պատժիչ պարագաներ:

Չինվորական բանտի չորս կողմը կառուցված էյին մի
հարկանի կորպուսներ, զորանոցներ, գլխավորապես հնդիկ,
արաբ, աղվան, ասիացի բանտարկյալների համար:

Սյդ կորպուսների շուրջը բանտի պահակների համար
շինված էյին բնակարաններ, իսկ նրանց բնակարան-
ների շուրջը բարձրանում էյին յերկհարկանի գեղեցիկ
տներ, վարչապետ-աստիճանավորների համար: Սյդպիսով,
զինվորական բանտն իրենից ներկայացնում էր մի անան-
ցանելի բերդ զինվորական խիստ հսկողությամբ շրջա-
պատված: Ամեն մի նոր բանտարկյալ, բանտի գրասենյակի
պաշտոնյաների կողմից քաղաքավարի ընդունելություն
գտնելուց և պաշտոնական հարց ու փորձից հետո, պար-
տավոր էր ներկայանալ կորպուսի մեջ գտնվող կտր
հրապարակը — հերթապահ բանտապետին, վորն անգլիա-
կան մտրակն իր վտարի փայլուն զանգապաններին խփե-
լով, զեմքը ծամուկելով, մի կասկածավոր հայացքով անդը-
ղում էր բանտարկյալին վտտից մինչև զուլս, ինչ վոր մու-
մուտ էր քթի տակ, ապա լուրջ կերպարանք ստանալով
հրամայում էր, հանվե՛լ:

Բանտարկյալին մերկացնում էյին, նրա իրերը, չնայած
մի տասն անգամ արգեն նայել էյին, այստեղ նորից յեն-
թարկվում էյին ամենամանրագնին խուզարկության և
քննության:

Բանտարկյալին տրվում էր մի ձեռք ձերմակեղեն, իսկ նրա
հագուստը՝ դատարկելով բոլոր զրպանները, ցուցակազրում
էյին և պահում: Բանտարկյալին իր բոլոր մանրամասնու-
թյամբ նկարագրում էյն գրքի մեջ, կշռում, չափում, նկարում
և հետո ուղարկում էյին նրան հատկացրած վանդակը:

Պատահում էր, վոր նրան հատակի վրա պցելով, լավ
տրորում էյին իրենց ծանր կրունկների տակ, թրջած
մտրակներով ծեծում, հետո զլորելով շարտում էյին վան-
դակը և ճոնչալով փակում վերադիր դռները:

Հասկանալի չէր, թե ինչո՞ւ ինձ հետ մի առանձին փրք-
ված քաղաքականությամբ վերաբերվեցին, իրերս խնամ-
քով նայեցին և նույն որը յերեկոյան ստուգումից հետո,
անկողին և յերեք կտոր տախտակներ տվին, վորոնց վրա
յես պետք է պառկեյի:

Առհասարակ, սկզբնական որերին բանտարկյալներին
վոչինչ չէյին տալիս, բոլորովին արգելում էյին զբոսանքի
և փակում էյին վանդակում «պարաշի» հետ:

Վանդակը դատարկ էր բառիս իսկական իմաստով.
վոչինչ չկար՝ վոչ աթոռ, վոչ սեղան, վորպեսզի պառկես և
հանգստանաս:

Սրդելված էր կարգալ, գրել, ծխել, յերգել, խոսել,
բարձր հազալ: Պետք էր թագավորեր միանգամայն մեռե-
լային լուսթյուն:

Սյդ յերկու-յերեք որը ստիպված էս մի կերպ քաշ
տալ քո գրությունը վանդակի անկյունում և կամ թե
ծեծված, շարգված, թավալել ցեմենտի սառը հատակին
և հիվանդ տառապել: Սյս բոլորը մասամբ կախված էր և
նրանից, թե ի՞նչպես էս դու քեզ պահում, ի՞նչպես է քո
վարքն ու բարքն, ի՞նչ հանցանք ունես դու. ամենապլխա-
վորը՝ թե ի՞նչ տպավորություն էս թողել բանտապետի
ոգնականի և վերակացուների վրա: Յեթե քո կերպարանքը,
քիթը, բերանը, աչքերը, ականջները, հագուստը, կո-
շիկներիդ քիթը, պատասխանները մի վորևե բանով նրանց
դյուր չեն գալիս, այն ժամանակ իմացիր, վոր դու յեր-
կար պիտի տանջվես անգլիական զինվորական պաշտոն-
յաների, ժանդարմների ճգնող կրունկների տակ:

Առավոտյան ժամը 5-ին դողանջում է գանգը և հեր-
թապահ վերակացուն, աղմկալի կերպով, արագ-արագ ան-
ցնում է միջանցքով և ծանր փայտով կոպտաբար ծեծում
վանդակների դռները, կոչելով, — վտաքի յելեք, ծույլ ամբան-
ներ: Սյդ պահին բոլորը պետք է անկողինը կարգի բե-
րեն, վանդակը մաքրեն և տրուսիկներ հագած՝ պատրաստ
կանգնեն վանդակի կենտրոնում ստուգման համար: Հըն-
չում է յերկրորդ գանգը, դռներից փականքները հանվում
են, դռները բացվում և սկսում է ստուգումն: Յերրորդ
գանգին բոլորն էլ դուրս են գալիս միջանցք և կրկին
ստուգվում: Չորրորդ գանգ՝ ձեռքերը կրծքին տեղնուտեղ
քայլում են: Հինգերորդ գանգ՝ վազելով շրջում են բանտի
չորս կողմը: Վեցերորդ գանգ՝ վազում են լվացարանում դուշ
ընկունելու: Ութերորդ գանգ՝ դուշն ընդհատվում է և
սկսվում է բոքս և միևնույն ժամանակ բոքս խաղացող
խմբերի վրա պոմպալին խողովակներից բաց են թողնում
սառը ջրի հոսանք: Իններորդ գանգ՝ ամեն ինչ դադարում
է, ամեն մեկը վերցնում է մաքուր գուլյը և կիսով չափ

չուր անելով տանում ե իր վանդակը խմելու համար, սրբ-
բվում ե և հագնվում: Տասներորդ զանգ՝ հերթով գնում են
նախաճաշ անելու:

Առավոտյան ժամը 8-ին, անխտիր, բոլորը գնում են
աշխատանքի, բազի ծեծվածներից, պատժվածներից, վո-
րոնք պահվում են մութ կարգերներում, ձեռքերը կապած,
յերբեմն շղթայած:

Պարտապիր աշխատանքները բաժանվում են մի քանի
կատեգորիաների. աշխատում են պահեստում, խոհանոցում,
արհեստանոցում, փահանագործի, կոշկակարի, ասաղծա-
գործի, ներկարարի արհեստանոցներում, աշխատում են կա-
ռուցողական աշխատանքներում, անց են կացնում յերկա-
թալար, ծեծում են հնդիկներին. այս վերջինը նույնպես
հաշվվում ե պարտապիր աշխատանք:

Բացի այս բոլորից, առավոտվանից մինչև ժամի 4-ը,
բանտարկյալների մի մասը դատապարտված ե լինում
դիսցիպլինար պատժի: Պատիժը կայանում եր նրանում,
վոր պատժվածները կողք-կողքի չորում են հատակագծած
շրջանակում գեղնի վրա և աղյուսի կտորներով սկսում են
անդադար մաքրել սև դույերը քսելով ներսից և դրսից
այնքան, մինչև վոր նրանք արծաթի փայլ ստանան:

Նրանք լուռ ու մունջ նստած, աղյուսով միշտ
քերում են կեղտոտ սև դույերը: Նրանց զիմաց, մտրակը
ձեռքին ման ե դալիս և հսկում ե հերթապահ վերակա-
ցուն: Այս բանտարկյալների մեջ կային սպիտակ գվար-
դիական սպաներ, կազակներ, վորոնք դատապարտված
եյին հարբեցողության, անկարգության, անհնազանդու-
թյան համար:

Ինձ մինչև ժամը 12-ը և նրանից հետո մեկական ժամով
զբոսանքի եյին տանում:

Շաբաթը յերկու անգամ կապիտանը գալիս եր և տե-
ղեկանում առողջությանս մասին՝ թե արդյոք մի վորևե
գանգատ կամ դիմում չունեմ և շողորթությամբ ավե-
լացնում եր. «ստիպված պետք ե մի առժամանակ հաշտվել
այս անհարմարությունների և զրկանքների հետ, մինչև
ձեր զրության վորոշվելը, հույս կա, վոր շուտով կպարզվի»:

Անտանելի, ձանձրալի յեր բերդի գարշելի միջնորդը,
վորը սոսկալի կերպով ճնշում եր մարդուն: Յերբեմն, յերբ
վերակացուն գանվում եր միջանցքի մյուս ծայրում, յես
զրույցում եյի իմ վանդակը մաքրող հնդիկի և սպասարկող

իրանդացու հետ: Իսկ հաճախ գիշերապահ վերակացուները
մեռելային ձանձրությից հոգնած, կամաց մոտենում և ցան-
կանում եյին խոսել ինձ հետ, խոսակցությունն սկսելով
«ինչու դուք չեք քնում» հարցով: Ամբողջ տասն և մեկ
ամսա բանտարկության ընթացքում, ուր ել վոր յես լի-
նեյի, ինչ պայմաններում ել վոր գտնվեյի,—սկսած Պարս-
կաստանից, Միջագետքից, Արաբիայից, Հնդկաստանից,
Յեգիպտոսից, Միջերկրական կղզիներից, Տաճկաստանից
և այլ տեղերից, միշտ ել կենդանի վկա եմ յեղել այն բազ-
մաթիվ փաստերին, վոր աշխատավորության մեջ կար մի
անասելի հետաքրքրություն, մի անպատմելի բուռն ձգտում
իմանալ, լսել, տեսնել, թե ովքեր են բոլշևիկները և ինչ
են ցանկանում նրանք:

Մինչև իսկ սպիտակ գվարդիականների, կազակների
մեջ, որինակ նրանց, վորոնք փակված եյին Բասրայի զին-
վորական հաղալովախտում, հետաքրքրության այս ալիքը
նկատվում եր դեռ 1919—20 թ. Հնայած այն բամբասանք-
ներին, անխտանություններին և այն արյունոտ շա-
ատելությանը, վորը Յեվրոպական իմպերիալիստներն ամեն
կերպ աշխատում եյին սրսկել աշխատավորության գի-
տակցության մեջ՝ բոլշևիկներից կտրելու, անջատելու
համար:

Լսելով իմ մասին, վորպես բոլշևիկի, մի անգուսպ ցան-
կություն կար մի կերպ տեսնվել ինձ հետ, խոսել: Քանի-
քանի անգամ, յերբ մենք միջանցքում կամ բժշկի մոտ
հանդիպում եյինք միմիանց, նրանք աշխատում եյին մոտե-
նալ, մի բան ասել, սակայն վերակացուն խանգարում եր:
Մի անգամ, յերբ իրլանդացին ինձ բազնիք տարավ, վերա-
կացու չկար: Բաղնիքում յերեք կազակներ արդեն լողա-
ցել եյին և հագնվում եյին: Նրանց տեսնելուն պես
յեսբարեկեցի ուսերեն և իսկույն ավերացրի:

- Իստոնե ուտել ոտարի հացը, այնպես չե:
- Այո, դառն ե և թունավոր: Վոր կողմերից եք:
- Կովկասից:
- Հյուսիսայի՞ն կովկասից — տեղերից վեր թուշելով
կանչեցին նրանք:

Յես հակիրձ կերպով հայտնեցի իմ վորտեղից լինելու և
ձերբակալվելու մասին: Կազակները գառնությամբ պա-
մեցին, թե ինչպես անգլիացիք ողտազործեցին պեններսլ
Սեմսիցների բանակը՝ քանի ճակատը գոյություն ուներ: Իսկ

յերը Պարսկաստանի հետ պայմանադիր կնքվեց, անգլիացիներն ստիպված ելին հետ նահանջել: Մինչ այդ՝ Խեմսիցների բանակը անգլիացիներից ամեն տեսակի ոգնություն եր ստանում: Հենց վոր սահմանն անցան, հասան Բաղդատ, գեներալ Խեմսիցներին և զնդապետներին խոշոր գումարներով վարձատրեցին և ճանապարհեցին Փրանսիա, իսկ զինվորներին կամաց-կամաց ամեն ինչից զրկեցին և վերջն ել ստիպեցին կիզիչ արեվի տակ բանել ավազոտ անապատներում:

— Ա՛խ, դուք չգիտեք, թե ինչպես նենգավոր կերպով մեզ խաբեցին. մեզ համար ավելի լավ եր մնալ բոլշիկների մոտ և յենթարկվել չեկայի խիստ պատիժներին, քան թե խաբվել սրանց խոստումներին, մնալ այստեղ և ստրկանալ անգլիական զինվորների առաջ, — ասացին միաբերան կողակիները: Լավեց վերակացույի ձայնը, մենք շտապեցինք բաժանվել:

Մի անգամ յես խնդրեցի կապիտանին թույլ տալ ինձ նույնպես աշխատելու մի վորևե արհեստանոցում:

— Ի՞նչպես, — զարմանքից աչքերը չռեց, ի՞նչ կարող եք անել դուք այնտեղ:

— Ա՛յն, ինչ վոր ուրիշներն են անում:

— Դժբախտաբար մենք իրավունք չունենք ձեզ ստիպել աշխատելու:

— Բայց դուք ինձ չեք ստիպում, այլ յես ինքս եմ ցանկանում աշխատել:

— Այո, բայց մենք պարտավոր ենք ձեզ ապահով պահել, իսկ աշխատանքի վայրում կարող ե հազար պատահարներ լինել՝ դժբախտություն գործիքների հետ, մեքենայի հետ, անհամաձայնություն մյուս աշխատողների հետ, անախորժություն և այլն: Համենայն դեպս մենք կհարցնենք Բաղդատ, վորովհետև դուք ամբողջովին Բաղդատի հրամանատարության իրավունքի տակ եք գտնվում և մենք բոլորովին չենք կարող խանգարել նրա կարգադրությունը:

— Բայց ի՞նչ պիտի լինի այս գրության վերջը. այսպես անկարելի յե մարդուն գաղանի պես վանդակում պահել, զուրկ մարդկային տարրական ամեն հարմարությունից:

— Բայց չե՞ վոր դուք դատապարտված եք և պատժված:

— Վո՞ր մեղքերիս համար, և ի՞նչ կապ ունեմ յես զինվորական պահականոցի հետ:

— Բաղդատն այդ մասին լավ գիտե, պատասխանեց կապիտանը կտրուկ և չոր կերպով:

— Բայց այդ բոլորը միմիայն յենթադրություններ են և այն ել կասկածի վրա հիմնված, փաստեր չկան:

— Փաստեր կան: Բաղդատը լավ գիտե:

— Այն ժամանակ թույլ տվեք իմ միջոցներով հեռանալ այստեղից:

— Ո՞ւր եք ուզում գնալ:

— Թեկուզ Փրանսիա:

— Փրանսիա: Ո՞, վոչ, այդ անկարելի յե: Փրանսիան մեր դաշնակիցն ե, մենք վնասակար մարդկանց այնտեղ թույլատրել չենք կարող:

— Վնասակար... և հիշեցի Կուտուլ-Նմարայում պատահմամբ պարսիկ զրազրի միջոցով կարգացած իմ գործում գտնվող հետեվյալ վորոշումը. — «Խիստ վտանգավոր մարդ ե անգլիական կոլոնիալ գործի համար Պարսկաստանում և Միջագետքում»:

— Ի՞նչպես անել այդ դեպքում:

— Վոչինչ, մի անհանգստացեք, շուտով կվորոշվե ձեր հարցը:

— Յես յերեք յերկար ամիսներ անցկացրի այդ ծանր և դաժան պայմաններում, շրջելով զբոսանքի համար վորոշված հատուկ տեղերում՝ մայթի վրա, միջանցքում և այլն:

Բանտի կենտրոնում, մեր կորպուսի դիմաց շինված եր յեկեղեցի, վորի աջ կողմում գտնվում եր մի խաչածեմ տախտակ, վորտեղից կախված ելին կապանքներ, կաշվե գոտիներ, յերկաթալարեր և այլն՝ հնդիկներին պատժելու, տանջանքներ տալու համար: Յեկեղեցու ձախ կողմում բարձրանում եր մի աշտարակ: Սկզբում յես յենթադրում ելի, վոր դա պահակատեղի յե, սակայն վորքան մեծ յեղավ զարմանքս, յերբ իմացա, վոր դա կախազանի աշտարակն եր:

Ամեն որ յես զբոսնում ելի ստվերում: Ինձնից վոչ հեռու, շրթայակապ, յերկու զինված պահակներով զբոսնում եր բարձրահասակ, լայնաթիկունք գեմքով սև հնդիկ խեյրաթը:

Հնդիկն ամեն անգամ, յերբ հավասարվում եր ինձ, իր սև վառված աչքերով նայում եր իմ կողմը և նշանակալի ժպտում:

Ինձ սպասարկող իրանդացիին պատմում եր, վոր հրն-
դիկ Խեյրաթը զինվորական բարձր կրթութեամբ, բանա-
կում բարձր պաշտոն ունեեր:

Նա հին հեղափոխական եր: Բանակում կազմակերպում
և պատրաստում եր իր զինվորներին, վորպեսզի մի հար-
մար բուսեյում հրացանների սվիններն ու թնդանոթների
բերանները շուռ տար և արնաշաղաղ աներ անգլիական
կոլոնիստների, հարստահարողների գլխագունդը:

Յե՛վ այդ պատմութեանը կարճ ե:

Արաբական ապստամբութեան ժամանակ, յերբ ամբողջ
յերկաթուղին Բաղդատից մինչև Պարսից ծոցը քարու-
քանդ եր արված, յերբ կիսամերկ արաբներն արաբական
նժույզների վրա կովում եյին վորպէս անվախ «սատա-
նաներ», Խեյրաթը յուր գործասով սպասողական դիրք
եր բռնել: Բրիտանական պետութեան զորքերի դեմ հայտա-
բարված կռվի ամենատաք բուսեյին անցնում ե արաբական
ապստամբների կողմը, կուտակված զայրույթով հարձակվում
ե անգլիական հրամանատարութեան զորքերի վրա և շար-
գելով նրանց զրավում ե ամբողջ շրջաններ՝ Եմարա, Ամ-
բարա և այլն:

Հետեւանքներն անկասկած հաջող կլինեյին Միջա-
դետքի համար, յեթե Յեզիպտոսը, Հնգկաստանը, Փիշուրը,
Լահորը, Փենջաբը, Պարսկաստանի Քիրմանշահը և տաճիկ-
ները Մոսուլում իր ժամանակին վոտքի կանգնեյին:
Սակայն հաղթութեան համար շատ ու շատ զոհեր են հար-
կավոր: Կուտել-Եմարայի գրավումը, նոր զորքերի մուտքը,
Պարսկաստանի, ասորիների, հայերի, թուրքերի զավաճա-
նութեանը, վորոնք տարվելով իրենց ազգայնամոլութեամբ,
գայթակղվում են անգլիական վոսկով և հուշները զնե-
լով յեվրոպական գիպլոմատիայի խաբբա խորհուրդների
վրա, անցնում են Միջագետքի սահմանը: Բակունըայի
ավազուտներում կատարելապես կողոպտվում են անգլիա-
կան կոլոնիստների կողմից և զրկվելով ամեն բանից,
ստիպված են լինում կյանքի սուղ պայմաններում ստրկա-
կան պայմանագրեր ստորագրել և աշխատել ավազուտնե-
րում: Ապստամբութեանը ճնշվում ե, ապստամբները
շրջապատվում են և գերի ընկնում:

Անգլիական սպան, վորը պիտի ձերբակալեր հնդիկին,
դեռևս զինաթափ չարած՝ մոտենում և բանակի առաջ կող-
տաբար սպտակում ե նրան:

Կատաղած հնդիկը մեկ ակնթարթում դուրս բաշելով
ատրճանակը, տեղն ու տեղ գնդակահարում ե ինքնա-
վատահ սպային: Ամեն կողմից հարձակվում են նրա վրա,
վորպեսզի շրջապատեն և զինաթափ անեն: Նա դիմադ-
րում ե կատաղի կերպով: Յերկար անհավասար մենամարտից
հետո նրան զինաթափ են անում, վայր գցում և ձեռքն ու
վոտքը կապում: Նա զայրվում եր կատաղած գաղանխ նման:
Աչքերը չուկել եյին, արյունով լցվել, շրջանակից դուրս
թռել: Քրտինքը պատել եր նրա բրոնզյա մարմինը և
բերանից առատորեն հոսում եր փրփուրը: Անգլիական գա-
ղանութեանները և վոտնաձգութեանները դեմ մղած ան-
հավասար կռվից հետո նա խելագարվում ե: Նա ութը ամիս
շարունակ բժշկվում ե հիվանդանոցում: Բավականաչափ
կազդուրվելուց հետո, նրան փոխադրում են զինվորական
հաուպտվախտար, շրթայում և փակում են վոչ թե ինդուս-
ների, այլ մեր կորպուսի վանդակներից մեկում: Յեմեն-
տած հատակը ծածկում են գորգերով և ապահովում փա-
փուկ անկողնով: Նա պառկած եր հանդիստ և լուռ: Նրան
դուրս չեյին թողնում: Հետո կարգադրութեան յեղով նրան
որական յերկու անգամ դուրս բերել զբոսնելու:

Յերբեմն վիրավոր առյուծի պես կատաղի կերպով մոն-
չում եր նա: Այդ սպանին հնդիկ բանվորները, զինվորները,
ձերբակալվածները, վորոնք գիտեյին նրան, կանգ եյին առ-
նում, չոքում և կրծքներին ծեծելով կոչում եյին:

— Խեյրաթ, Խեյրաթ, հարազատ զավակն վաթանի...

Մի անգամ, հետևուարարից (շտաբից) նրա մոտ յեկավ
կապիտանը: Վանդակն իսկույն բացին. նախ ներս մտան
զինված պահակները, հերթապահ վերակացուները, ապա
դռների մոտ յերեվաց կապիտանը:

— Բարև, ինչպես եք դուք ձեզ զգում — ասաց կա-
պիտանը:

— Շնորհակալ եմ, շատ լավ — պատասխանեց հնդիկը:

— Ինձ ձեզ մոտ ուզարկել ե ժեներալը:

— Շատ ուրախ եմ:

— Ժեներալը կարգադրել ե իմանալ ձեր կամքը:

Հնդիկը, վոր այդ ժամանակ բարձերին կրթնած ծալա-
պատիկ նստած եր հատակին, հառաչում եր իր շղթաների
ցավից:

— Խնդրում եմ հայանեցնեք ձեր մեծահոգի ժեներալին,
վոր յերբ նրանք խլում են մարդուց ամենաթանկագինը,

փոխարեն ինչ կարող են տալ — վոչինչ: Միաժամանակ հայտնեցեք, քանի վոր յես կենդանի յեմ, ցանկանում եմ ամբողջ ժամանակ տեսնել արևը, այդ կարմիր, հրային հզորությունը արևելքից արևմուտք: Ասաց և լուեց:

— Ուրիշ վոչինչ:

— Ուրիշ վոչինչ:

Կապիտանը հեռացավ: Բոլորը դուրս յեկան և վանդակի դուռը ամուր փակվեց: Մի քիչ անց, վանդակում լավեց սարսափելի մոնչյուն: Մյուս ուր, ժեներալի կարգադրության համաձայն, պահակները նրան զբոսնելու եյին տանում արևածագից մինչև մայրումուտ, հառապովախտի շուրջը: Խեյրաթը տեսնելով զբոսում բանող անգլիացիներին, հնդիկներին, աֆղաններին, արաբներին, շարժում եր գլուխը և աղմուկով շղթաներով:

Մի անգամ, յերբնա բախում զբոսնում եր, խաչափայտին կապում են մի մերկ հանցավոր հնդիկի և սկսում են տանջել: Այդ զագրելի տեսարանը սոսկալի կերպով ազդում ե խեյրաթի վրա: Նա մի րոպե կանգ ե առնում, այլայլվում ե, յերբրվում, շառաչում շղթաներով, մոնչում և արագ ուղղում ե իր քայլերը դեպի խաչափայտը, բայց պահակները շրջապատում են նրան և տանում վանդակ:

Մի անգամ զբոսանքի ժամանակ նա հավասարվելով ինձ, կանգ առավ և ասաց անգլիերեն.

— Յես ձեզ հասկանում եմ, բայց յես կուզենայի իմանալ ձեր պատմությունը:

Պահակը իսկույն կտրեց առաջը և առաջարկեց ինձ անցնել: Առաջ անցնելով հնդիկին պատասխանեցի.

— Նա համարյա թե նման ե ձերին, պայքար աշխատավոր ժողովրդի համար, կոլոնիստների դեմ:

Նա արագ կերպով շուռ յեկավ դեպի ինձ, նրա աչքերը կրակով լի բոցավառվում եյին. շղթայած ձեռքերը բարձրացրած վերև բացականչեց.

— Հիզրային պետք ե սպանել և այդ ուրը հեռու չե:

Յերեկոյան կապիտանը նրա մոտ յեկավ և հարցրեց, թե արդյոք խեյրաթը կցանկանար տեսնել իր ամենամոտիկ բարեկամներից մեկնումեկին և խոսել նրա հետ:

— Յես ամեն ոք տեսնում և խոսում եմ բոլոր նրանց հետ, — ասաց խեյրաթը, վորոնց հետ կարիք կա տեսնվելու, իսկ միուսներին, վորոնց հետ յես անպայման կուզե-

նայի տեսնվել և շատ բան ասել, դուք նրանց չեք ճանաչում և հարկավոր չե ճանաչել: Ինչ կասկած, վոր յեթե դուք նրանց ճանաչելիք, ձեր «մեծահոգի» ժեներալը կարգելեր նրանց այցելությունը ինձ մոտ: Յեվ վերջապես, յեթե դուք նրանց իմանաք, դուք նրանց ինձ չեք հասցնի, դուք նրանց իմ ուրին կգցեք: Վնչ, վոչ, ավելի լավ ե չտեսնել նրանց, չխոսել նրանց հետ, թող նրանք հանգստանան:

Կապիտանը գնաց: Սկսվեց նույն սովորական տաղտուկ կյանքը: Հնդիկին այլևս դուրս չեյին բերում զբոսնելու և նրա մոտ վոչ վոքի թույլ չեյին տալիս, մինչև իսկ վանդակը մաքրելու համար: Կապիտանը վերադարձավ յերկուշաբաթից: Նա ուղղակի դիմեց խեյրաթին, ասելով

— Ինձ, ուղարկել ե ձեզ մոտ հետկուարդը. յեթե դուք մեզ հայտնեք ձեր ապստամբության պլանը և մասնակցողների անունները, հետկուարդը կշնորհի ձեզ ձեր կյանքը և մինչև անգամ կպարգևատրի ձեզ:

Հնդիկը նստած տեղում կծկվեց, խոփոռեց դեմքը, մի ակնթարթում խայթված ոձի նաման ծռացավ կապիտանի առաջ: Չապիտանը սարսափից յետ-յետ գնաց և այլայլվեց: Պահակներն անմիջապես շրջապատելով կապիտանին, կտրեցին հնդիկի առաջը: Հնդիկը կատաղությունից հուզվեց, տատանվեց և թուլացած ընկավ բարձերի վրա, շղթայած ձեռներով ծածկելով յերեսը:

Մի րոպե տիրեց մեռելային լուսթյուն, վորն ընդհատելով կապիտանը, հայտարարեց.

— Յերեք ուրից հետո դուք պետք ե ընդմիշտ բաժանվեք այս կյանքից: Ասացեք՝ ինչ վոր դուք ցանկանում եք:

Հնդիկը, վոր լարված ուշադրությամբ լսում եր, դառը ժրպիտը դեմքին ասաց.

— Հայտնեցեք ձեր «մեծահոգի» ժեներալին, վորը հանդիսանում ե բրիտանական պետության իսկական ներկայացուցիչը, վորը ամբողջ աշխարհում հռչակված ե իր «մարդասիրությամբ», վորը կողոպտել ե Արևելքի բոլոր ժողովուրդներին, և վորը հարստացել ե Հնդկաստանի հաշվին, յես նրանից վոչինչ չեմ խնդրում: Նա վոչինչ չունի ինձ տալու, բացի այս շղթաներից և սոսկալի թույնից, վորից մարդ աստիճանաբար թմրում ե և մեռնում: Յես տեսա արևը, մեր լուսավոր, հրակեզ արևը, այն՝ ինչ վոր դուք հզոր բրիտանիայում չունեք: Յես կարգացի մարդկանց աչքերում այն, ինչ վոր դուք անկարող եք կարդալ, այն՝ ինչ

վոր սերունդից սերունդ անցնում է դարևոր ծանր ճնշումով, հարստահարությամբ: Յես հանդատացա, վորովհետև այն՝ ինչ վոր յես կատարեցի, կկատարվի հաղար անգամ ավելի մեծ չափերով, այն՝ ինչ վոր յես կարգացի հնդիկներին, արաբներին, աղվանների հյուս, կուրացած աչքերում, հազար անգամ հզոր և ուժեղ ե, քան թե ձեր թնդանութները, գնդացիները, գազերը...

Նրա ձեռքի և վտաքի շղթաները շառաչեցին. բոլորն ել մեծ ուշադրությամբ և սարսափով նայում էին: Իսկ կապիտանը սառնարյուն կերպով ձխում եր և լուռ գրում:

— Արևելքի ճնշված, կեղեքված ժողովուրդները արթնանում են իրենց դարևոր խոր քնից: Նրանք թոթափում են իրենց ուտերից կապիտալիզմի արյունոտ լուծը: Նրանց կորացած մեջքը արդեն շակվում է և հեռու չէ այն օրը, յերբ միլիոնավոր աշխատավոր բանվորների մագոլոտ ձեռքերի հարվածներից դեն կշարժվեն «քաղաքակիրթ» բուրժուազիայի իշխանության բռնակալ շղթաները: Յեվ յեթե առաջին անգամ Մոսկվայում բռնկված համաշխարհային հրդեհն անգոր լինի գաղութներում և կիսագաղութներում այրել իմպերիալիստների խախուտ հիմքերը, այդ դեպքում մենք՝ Արևելքի ճնշված լեզվոններս՝ կավելացնենք այդ հրդեհին մեր շիկացած լավայի հոսանքը, վորն ընդմիջա կկործանե աշխարհի երեսից այն, վորին ասում ենք իմպերիալիստական պետությունների հզորություն: Յես մեռնում եմ հանգիստ և խոր համոզմունքով, վոր Արևելքի ժողովուրդներն արթնացել են և շուտով կկատարեն իրենց մեծ գործը:

Գլուխը ձեռքերի մեջ թաղած Խեյրաթը բնկնում է բարձերի վրա: Գապիտանը հանդարտ կերպով վերջացնում է գրելը: Մերթ հնդիկին, մերթ չորս կողմը նայելով, նա վառում է սիգարը և սառնասիրտ կերպով դուրս է գալիս փանդակից: Նրա հետևից դուրս են գալիս նաև պահակները, տարակուսած նայելով Խեյրաթին:

Հետևյալ օրը Խեյրաթի մոտ են բերում իր ծանոթներից մեկին, բայց նա գայրացած չի ընդունում: Մի քանի օրերից հետո, յերեկոյան դեմ, նրա փանդակն են բերում պտուղներ, վարդեր, տապակած հավ, միս, արևելյան և արևմտյան քաղցրավենիքներ, շոկոլադ, փաշմազ, սիգարներ և նրա յերեք բարեկամ հնդիկներին:


Խեյրաթը այդ բոլորն ընդունեց իրեն սովորական հեղանակի ժպիտով: Յերբ հնդիկները սկսում են պատմել Լահորի, Փիշաուրի և Փենջաբի մասին և հետո առաջարկում են ուտել և խմել... Խեյրաթն ամենայն սառնասրտությամբ լսում է նրանց և միառժամանակ ազահորեն ներս ծծում սիգարի հարբեցնող թուխը, յերբեմն յերբեմն նրանց վրա վայրենի հայացք նետելով: Հանկարծ հառեց իր մուլեզին հայացքը նրանց վրա և գոռաց.

— Ի՞նչ եք ուզում դուք ինձանից: Ի՞նչ առաջարկում եք ուտել, խմել, ուրախանալ, պարել, կարծես թե հարսանիքում լինեք: Ի՞նչ ոգուտ դրանից, յեթե հինգ րոպե կամ հինգ ժամ՝ մինչև իմ մահը հազենամ աշխարհի բոլոր բարիքներով: Ի՞նչ ոգուտ դրանից, — ձեզ եմ հարցնում, իմ տանջված ժողովրդի, կամ իմ հայրենիքի համար: Ի՞նչ առաջարկում եք այս բոլոր բարիքներից մի վարկյան հարբել, իսկ միթե դուք կույր եք և չեք նկատում, վոր այս բոլոր բարիքների վրա արյան կաթիլներ կան: Տեսեք, տեսեք, Հոդկաստանի լավագույն զավակների արյան կաթիլները, վորոնք դեռ թարմ են այս մրգերի վրա, առաջարկում եք ինձ վայելել... այդ կաթիլներն անգամ չեք լվացել: Ասենք միևնույն է, դուք անկարող եք այդ կարմիր բծերը մաքրել: Պետք է վոչնչացնել: Յեվ նա կատարությամբ հարձակվում է հատակի վրա շարված բոլոր ամսանների վրա, վորոնք իրենց մեջ պարունակում էին աշխարհի բարիքները, վոտքով տրորում է և շարտում դռան շեմը: Վրեժխնդրությամբ լցված նրա աչքերը կարմրում են և նա հուզմունքից սկսում է դողալ:

Նա այս անգամ չի մոռնում, այլ ծանր տնքում է՝ կրծոտելով շրթունքները նստած տեղից: Յերեք «ծանոթ» հնդիկները վախեցած բարձրանում են նստած տեղից, պահակները բացում են դռները և մնում են դռների մոտ կանգնած: Խեյրաթը վիրավոր գաղանի պես վտաքի կանգնելով, այրունակալած աչքերով նրանց վրա է նայում և կոչում.

— Յես դեռ ուժով եմ և աշխուժ: Ո՛ր, վորքան յես ոգտակար կարող եյի լինել մեր ժողովրդի ազատագրման մեծ գործին: Գնացեք և հայտնեցեք իմ վերջին վողջույնը մեր յերկրի լավագույն զավակներին, վորոնք իրենց կյանքը չեն խնայում իրապաստաբանության համար: Գնացեք և մաքրեք արյան հեղեղը յերկրից: Հայտնեցեք,

CG-01904



վոր յես մեռնում եմ ամենայն վստահությամբ, չկասկածելով, վոր ինձ նմաններն այժմ բազմաթիվ են, և նրանք վոչինչ չեն խնայի մեր յերկիրը իմպերիալիստական ճրգճող կրնկից ազատելու համար: Նա հանկարծ լռեց: Կարծես մուրճի ուժեղ հարվածով խփեցին գլխին: Յերեք հրնդիկներին դուրս տարան: Առավոտյան ժամը չորսին գինված պահակները շարքերով կանգնել էյին միջանցքում և պահականոցի դռների առաջ: Բոլորը դեռ քնած էյին: Բանտում կապարի պես ճնշող մի լուսթյուն կար: Խավարի մեջ հազիվ նշմարվող ստվերների անորոշ շարժումները գուշակում էյին մի չար խաղ: Վանդակի դռները գաղտագողի բացվեցին: Փսփսում են: Խեյրաթին կամաց արթնացրին: Նա քնած չեր: Չափազանց զսպված, սառնասիրտ կերպով վտարի կանգնեց և սպասում եր ինչ վոր բանի: Պահակապետը կարգադրություն արեց: Խեյրաթին առանց աղմուկի միջանցքով այնպես տարան, վոր շղթաներն անգամ չշառաչեցին: Նա ինքն եր զուռ քայլում շրջապատված պահակներով: Բակում, յեկեղեցուն դեռ չը հասած, նրանք թերվում են ձախ՝ դեպի կախաղանի աշտարակը, յերբ հանկարծ Խեյրաթը անսպասելի կանգ ե առնում, կռթնում աստիճաններին և կատաղի կերպով մոնչում ե: Սա նրա վերջին, օրհասական մոնչյունն եր:

Բանդարկյալները ծանոթ լինելով այդ մոնչյունին, քնաթաթախ վեր են թռչում և վազում դեպի պատուհանները: Նրանք բոլորն ել նախազգում էյին Խեյրաթի մահը և մի այրող ցավ ճմլում եր նրանց սիրտը: Նրանք ձեռքերը պատուհանի յերկաթե ձողերի միջից դուրս հանելով, շարժում էյին ողի մեջ: Դա բանտարկյալների համերաշխության ազդանշանն եր: Հնդիկին տանում են դեպի կախաղանի աշտարակը: Շղթաներն արձակում են, ձեռքն ու վտարը ամուր պարանով կապում, նստեցնում են աթոռի վրա և պարոնի ողը հագցնում են վզին: Աթոռը հանկարծակի կործանվում ե ներքև և նա ճոճվում ե ողում, բայց ծանր մարմնի ուժգին անկումից պարանը կարվում ե և նա ընկնում ե գետին:

Նրան իսկույն շրջապատում են չորս դահիճներ և տեղնուտեղը խեղդում ծանր տանջանքներով... Կես ժամ չանցած, աշտարակի դռները մյուս կողմից բացվում են և նորից ամուր փակվում: Լսվում ե հեռացող ավտոմեքենայի աղմուկը: Առավոտյան զոդանջում են յեկեղե-

ցու զանգակները և բոլորը ներս են մտնում տաճարում աղոթելու: Մաղթանքը վերջանալուց հետո հառապտվախտում կրկին սկսվում ե սովորական կյանքը: Այդ օրն ամենքի դեմքի վրա առանձին արտահայտություն կար: Բոլորի աչքերն ու շրթունքները համր աղաղակում էյին ինչ վոր սարսափի մասին, վոր թեև չէյին տեսել, բայց իրականում կատարվել եր: Չբոսանքի ժամանակ, փայլուն աչքերով բրոնզագույն հնդիկն այլևս չկար, վորը շատ եր սիրում գրոսնել արևի տակ: Հնդկաստանի հրկիզող արևը սովորականից ավելի պայծառ եր լուսավորում, գրոսանքների մեջ փնտռելով Խեյրաթին, իսկ Խեյրաթը չկար...

Հնդիկները, արաբները, ազվանները գլխիկոր քայլում էյին դրսում և նրանց ներքին աշխարհում հնչում եր բողբոջ, ցատումի մի ձայն: Սովորականի պես իրլանդացի պահակն ինձ նախաձայ ե բերում:

— Չիմացա՞ք դուք, — փսփսաց իմ ականջին, — իմացա՞ք, թե ինչպես խեղդված հնդիկի արյան մեջ շաղաղված, նրանք յեկեղեցի մասն քրիստոնեական տաճարում մաքրվելու համար: Այդ հնդիկի փրփրող արյունը կթափվի նրանց հայրերի գլխին:

Հնդիկը, վորը մաքրում եր իմ սենյակը, բարձրացրեց գլուխը, դողդողալով մոտեցավ ինձ, ամուր բռնեց ձեռքս և ասաց փրփուրը բերանին:

— Լցվում ե համբերության բաժակը, հարկավոր ե դաշույնը սրել և պատրաստ լինել...

Յերկու շաբաթ անց՝ մեր նավը մոտենում եր Հնդկաստանի ափերին — Բոմբեյին և ինձ թվում եր, վոր ամբողջ բաղաբը, ամբողջ Հնդկաստանն այրվում ե, վառվում ե ժողովրդական ապստամբության կրակով: Կրակը առկայծում եր, բոցավառվում, տարածվում եր ամբողջ յերկրում և շառագունած հորիզոնում պարզ յերևում էյին հեղափոխության մեծ հրդեհի կարմիր ցուրեբը:

* * *

Հայաստանի քաղաքացիական ան-
վանությունը քննարկում կունենիս
բնկերոջս՝ Լիպարիս Մխչյանի հի-
շուհիս

Անցանք, ընկեր, սարից իջնող աղբյուրի պես,
Գարնան կարմիր ծաղկունքը վառ թող սիրենք քեզ. —
Սրտիդ վրա թող շուք անի ամպի քուլա,
Մեղմ ու քնքուշ և սրազդին անձրևը լա:

Դու չհասար մեր պայքարի պայծառ ուղին,
Յե՛վ չպոկիր ալ-ծաղիկը լուսաշաղին. —
Քո անունով, հազար ձայնով, հազար յերգեր,
Թող շեփորեն կարմիր ճամբադ, հեռու ընկեր:

Կյանքից ծարավ, լույսից կարոտ ել չկան դու,
Բայց կայծերդ մեր սրտերում կան կենսատու. —
Յե՛վ քո ճամբով, հուժկու կամքով ամենազոր,
Ազատ որվա լույսին փարված թռչում եսոր:

Դու հեռացար հուշով պայծառ ու ժպտազին,
Բայց մով-ծովում յերգդ ե լողում կարոտազին —
Քո անունով, հազար ձայնով, հազար յերգեր,
Թող շեփորեն կարմիր ճամբադ, հեռու ընկեր:

ԱՅՆ ՈՐԵՐԻՑ ՄԵԿԸ

Աշնան անհրապույր խոնավ գիշերներից մեկն էր: Բա-
րակ մազվող անձրևի կաթիլները, խրճիթի բաց հերդիկից
կակտայով ծեծում էին ազի Ասլումի քուսրու մազե չոր
կարպետը:

— Ես անտեր անձրեփն ել վոր ձեռ չի քաշում, մեր
դարդն ու ցավը հերիք չի, ես տիրամենն ել մի լանիցա, —
փնթփնթաց ազի Ասլումը և գլուխը վերմալի տակ ծածկեց:

— Ազի, հլա քնել չես, — լավեց խրճիթի մյուս անկյուն
պանկած, բայց դեռ անհանգստությունից արթուն տասնյոթ
տարեկան Հերիքնազի ձայնը:

— Բա ազու աչքը քուն կուգամ, քանի են տափը մտած
Մուրադի լիրբ աղբերը գեղումը ման են գալիս:

— Մուս, ազի ջան, հենցա վոտի ձենա գալիս, — մոտե-
նալով կախիս գրկելով մոր մեջը, դողալով, հազիվ լսելի
ձայնով, շշնջաց Հերեքնազը:

Նրա թուխ ու յերկար մազերը փովել էին բարձով մեկ,
նրա աչքերը փայլում էին խավարի մեջ, վոնց մի դուրզ
ճրագ: Վախ կար այդ աչքերի մեջ, սարսուռ...

Մի պահ տիրեց մեռելային լուռություն, միայն անձրևն էր,
վոր թափվում էր ու անվերջ թափվում:

Ազի Ասլումը զգուշ վեր կացավ անկողնուց, ուսերին
ցնցոտիների մի կտոր առավ, խորն ու ծանր մի հառաջ
բաշեց և դանդաղ քայլերով մոտեցավ դռանը:

Մի պահ ականջ դրեց — վոչինչ չեր լսվում: Ինքն իրեն
սրտապնդելով, շունչը հավաքելով, բացեց դռան խաչածե
փականքը:

Դուռը ձռալով մի մատնաչափ բացվեց, վոչինչ չկար,
խավար էր ու անձրև:

Հերիքնազը վախից չորացել, սուս էր կացել, թվում էր,
թե նա չի շնչում, նրա մեջ ամեն ինչ քարացել էր:

Ազու հանգիստ հոգոցը շունչ ավեց նրան:

— Ազի ջան, յերբ կկորչեն եղ բեմուրագները, յերբ մեր Սարգիսը կգա: Ախ Ձանիբեկն ասում եր, վոր նրանք մոտ են...

— Սուս, Հերիք ջան, մատաղ, Սարգիսի անունը մի տա, պատերն ել ականջ ունեն: Կկորչեն, բա հո չէն մնա: Ախ, մի քանի աստվածը քանդի դրանց տունը, վոնց նրանք մեր տունը քանդեցին, — հանգստացնելով իր վորդուն, ասաց մայրը Հեղնարին, վորը լարված նայում եր դեպի դուռը, վորանեղ կանգնած եր ազի Ասլուամը:

Ազին, փայտի մի ծայրը գետնի փոսի մեջ խրելով, իսկ մյուսը դուռն յետևին հուպ տալով, դուռը փակեց ու լուս քայլերով դարձավ դեպի անկողին:

— Ինեք, բալեքս, քնեք, բան չկա, սասները կարել են:

* * *

Գյուղի զիշերն անհանգիստ եր, խավար եր և տազնապալի: Խմբապետ Մուրադի «կտրիչները» նոր խաղեր էյին խաղում գյուղի գլխին: Ձահել հարսներն ու աղջիկները գյուղամեջ չէյին կարող դուրս գալ: Նրանք գիշերներն ահ ու դողի մեջ էյին անցկացնում:

Հերիքնազը գեռ չեր մոռացել մի շաբաթ առաջ Ձաթնանց Վարդուշի հետ սեղի ունեցած դեպքը:

«Կտրիչներից» մեկը, վորին խլուրդ Տիգրան էյին կանչում, մեկ անգամ աղբյուրի մոտ պատահում ե Վարդուշին:

— Իո մեր քանի՞ քզի պես աղջիկ ունի խորոտ — դեմքը ծովուցով մոտենում ե Վարդուշին խլուրդ Տիգրանը: Ասում են թե ուզեցել եր ձեռքը վզովը գցի, բայց Վարդուշը վախից կուժը գցել եր ու փախել:

— Կեցի, քզի խեռ գշեր կխոսամ. — ասել եր խլուրդը:

Կես գիշերին, յերբ գյուղում խավար եր ու մութ, հանկարծ Վարդուշենց հերդիկից մի սև «լեշ» թրմփալեն տունն ե ընկնում: Խավար խրճիթում յերկու կանաչի դեմքեր, ահից չորացած, խլուրդ Տիգրանի ձեռքն են ընկնում:

Խլուրդ Տիգրանը վառում ե լուցկին:

— Հորի՛ շուղաբ չեյիր տա, անամոթ: Մենք ձզի խմար երուն կթափենք, դու ընձի փարչմը շուր չուզես տալ: Յել մորդ քովեն խեռ ընձի երթանք:

Ախպեր ջան, վորդիս, Տիգրան ջան, վոտիդ հողը ըլեմ, մատաղ, աղա ջան, աշխրքիս մեջը ես մի մենուճարն ունեմ, բաշխի, սխալվելա, ջահել աղջիկա, ամաչել, վախեցելա, վոր շուղաբ չի տվել...

— Ձենդ, ջադու, յես քզի խեռ չմ խոսա... Վարդանուշին գշերս ընձի խեռ տանել կուզեմ... Յել, յել քզի կսեմ: Մինչդեռ մայրը ծնկաչոք աղաչել պաղատել ե, վոր չմոտենա Վարդանուշին, բայց Խլուրդը վոտքի ուժեղ հարվածով գետին ե գլորել նրան ու Վարդանուշին իր ձանկն առել:

Յերկրորդ որը լուրը կայծակի պես տարածվեց գյուղում: Ասում էյին Խլուրդը «հյուր» ե գնացել Վարդանուշի մոտ...

Իսկ Վարդանուշն այդ որից այլևս չը բարձրացավ անկողնուց:

* * *

Գյուղում ել ջահել տղամարդ չեր մնացել:

Իրար հաջորդող գորահավաքները սրբել էյին նրանց: Տարիք ու արտոնություն հարցնող չկար: Դուրս էյին քաշում տներից ու պատերազմի ճակատն ուղարկում բոլոր նրանց, ովքեր գիտեյին հրացանի կոթ բռնել, ովքեր մի գույգ վոտք ունեյին և մի թեմ:

Ձանիբեկն ու նրա բուլշեփիկ տղերքը միայն խմբապետ Մուրադի և քյոխվի ձեռքը չընկան: Նրանք թափափեց կապվել էյին բուլշեփիկները բանակի հետ: Նրանք նախապատրաստում էյին այդ վայրագ տիրապետության կործանումը: Նրանք պալքար ելին տանում դաշնակցական բանբասանքների, պրովակացիաների դեմ, թե իբր բուլշեփիկները կացիներով և մեր ու մանուկ մորթելով են գալիս:

Իսկ թե քյոխվեն ու խմբապետի «կտրիչներն» ինչեր էյին անում նրանց ընտանիքների հետ, այդ արդեն բուլորին նայանի յեր:

Խմբապետ Մուրադի «կտրիչները» մուտքը փոխեց գյուղի դեմքը: Նրանք գրավեցին դպրոցը: Դպրոցի բալը դարձավ տավարի սպանդանոց: Վոչխարի, տավարի բառաչը մի քանի որում կտրվեց: Գործն սկսվեց վոչխարներից, խոշոր յեղ-շուրավոր անասուններից մինչև վոր հասավ հավերին:

Են վո՛ր գլխից ձեռք վերցրած մարդը կարող եր առարկել «Փիղալիների» կամքին, — են վո՛ր ըմբոստը կարող եր բողբեկ գյուղի իշխանության, քյոխվայի դեմ: Մագթաղի գասերը բոլորն եր անգիր գիտեյին:

Մագթաղի միակ այժը գոմեց դուրս քաշեցին:

Մագթաղը լաց ու կոծով գնաց քյոխվա Մուկուշին գանգատի:

— Բա՛, դու հմաչմ չե՛ս, մի եծի հմար ըտենց լաց ես ըլմ, զալմաղալ ես անմ: Բա նրանք վճնց անեն, վոր իրանց տուն ու տեղը թողած, ազգի հմար արին թափելու յնն յեկել: Թե վոր շատ կխոսաս, կհրամայեմ ծակուռը կոխեն հա՛, լավ միտդ բեր, վոր աղեղ ել բոլջեփկնների մեջա:

Մագթաղի համառութունը քյոխփեն չկարողացավ կտարել. հրամայեց յերկու «կարիչ» Մագթաղին քաշ տալով, քյոխփի դոմր գցեցին:

Գեղացիք այդ բանը լավ գիտեյին, հենց դրա համար ել շատերը լուռմ ելին և ով չեր լուռմ, գործը հասնում եր ծեծի, բանտարկության և այլն:

* * *

Ծեղը նոր եր բացվել: Ազի Ասլուան ինք իրեն անիծելով, աշխարհն ու իր բախտը, կուժն ուսին ջրի յեր գնում:

Ազի Ասլուան անսովոր արագությամբ, ասես թե շահե-լացել եր, հեփի հեփ ձորից տուն եր բարձրանում:

— Ազի Ասլում — եղ խեր ըլի. տանդ շահելը կտրվելա՛մ, վոր ետ պառավ հալովդ ջրի յես գնացել, — նենդաբար, ժպիտը թաղված թավ բեխերի մեջ, հարցրեց քյոխփա Մուկուչը:

— Խի՛ չեն կտրվիլ, քեզ մատաղ, ես կտրված տղերանց ահուց հեչ շահել ա կարմ դուրս դա՛մ — կուժն ուսից իջեցնելով պատասխանեց ազի Ասլուան ու մի խոր հոգոց քաշեց:

— Հը, դո՛ւ ել ես տղերանց ցավով տրաքվում, պառավ, հրեն են չփլաղները գալիս են, տենանք որդ ինչպես ա ըլելու, են վախտը դու ել տանից դուրս չես կարալ դա: Հվանում չեյիք խմբին, եսա նրանք գնում են, տենանք թե ի՛նչ ե ըլելու որներդ: Պրիկազ են ստացել, կռիվ են գնում. մենք թողալ չենք, վոր չփլաղները մեր գեղը մանեն:

Ազի Ասլուան ել լսել չեր ուզում, թե չե, վայ թե բեր-նիցը բան թոցներ Մարգսի մասին: Միայն այսքան ասաց՝ ըստ յերեփույթին զրույցը կտրելու համար:

— Հա՛, հա՛, Մուկուչ շան, յանի մենք մեր լավը յերբ գիտենք: Կուժն ուսն առնելով, ավելի արագությամբ շտապեց տուն:

— Չեզ մատաղ, աչքներդ լիս:

— Հը՛, ինչ ա ըլել — անկողուց վեր թռչելով հարցրեց Հերիքնազը:

— Լավ բան ա ըլել, բալա շան, լավ բան: Վայ, Մարգիս շան, գալիս են, գալիս:

— Ո՛վ, բոլջեփկները, — հարցրեց Վարդանուչը:

— Ախր Մարգիսը բոլջեփկա...

— Հայբաթ վոր, հայբաթ վոր, բոլջեփկները, Մարգիսը: Չորի գլխին ոստա եկա քյոխփին, շատ թթված եր ըրեփում. ասում եր, թե «քաջերը» գնում են առաջն առնեն, թե եղ «չփլաղ» բալջեփկները գալիս են:

— Ախ, յերանի արժան կլնե՛մ, մին ել նրա շեյրան բոյ ու բուսաթը կտենամ, քոսանա նրա մոր աչքերը, ով ա գի-տում, պլենա ընկել, թե սպանել են ես արնխումները, — ասաց Հեղնարն ու բարձր ձայնով սկսեց հեկեկալ:

— Դու ել ի՛նչ ես սարսաղ սարսաղ դուրս տալի. նա են պտուղներից չե, վոր սրանց ձեռն ընկնի, համել Չանի-բեկն ասաց վոր նա սաղ-սաղամաթա, ախր չե վոր Չանի-բեկը նրա մոտ ըննում եր. համա եղ տղեն ես մի շաբաթա վոր չի երեփում: Յերջանկության լաց եր ազի Ասլուան տունը: Յերեք ու հարյուրավոր սրտեր եղ որը տրոփում էյին անհամբեր սպասումից:

* * *

Որը կիսվել եր արդեն: Արևի ցուրտ ճառագայթները հա-մառորեն տաքացնել էյին ուզում յերկիրը: Գյուղի շահե-ներն ու պառավներն արեփկող արած պատերի տակ, սըր-տերում մի տեսակ անհանգիստ վախ ու դող պահած սպասում էյին, չեյին համարձակվում իրար վորևե բան ասել: Շատ քչերն էյին փախել, Չանիբեկի աշխատանքն եղուր չեր կորել:

Քյոխփա Մուկուչն ել չեր փախել: Սակայն վոչ թե նրա համար, վոր անմեղ եր զգում իրեն կամ թե չեր վախում, վնչ, այս անգամ ել նա ուզում եր տակից խորամանկու-թյամբ դուրս դալ: Հեշտ չեր նրա համար թալանի քրտին-քով հավաքած հարստութունը ձեռքից թողնել. հենց դրա համար եր, վոր իր շուրջն եր հավաքել մի քանի պառավ-ների, շարքով կանգնել էյին տան առջև, իսկ դարպասի գլխին ել մի կարմիր լաթից դրոշակ տնկել և սպասում եր բոլջեփկներին. գիմավորել եր ուզում:

«Քաջերը» մկների պես նահանջեցին: Գյուղացիների կու-տակված զայրույթը նրանց ավելի շատ եր վտանդ սպառ-նում՝ քան խմբապետ Մուրադի մտրակն ու մառգերը:

— Գալիս է՛ն, գալիս է՛ն...

Գեղի ձերից լավեց զինվորական յերգերի և ուռաների ձայնը: Քիչ հետո, ձիավորների մի տասնյակ կանգ առավ գյուղի կենտրոնում: Գեղացիք, վոր հավաքվել էյին ըստ յերևույթին դիմավորելու, համարձակություն չունեցան խսկույն մտանալ: Ինչո՞ւ: Այդ հարցը նրանցից ամեն մեկը գուցե մի հազար անգամ տվել էր իրեն.

— Ասում են, միթե՞ամ թե կացիներով են կոտորում:

Քյոխվեն ետտեղ ել խորամանկ հանդիսացավ: Ոգտվելով մյուսների ճնշված գրությունից առաջ անցավ: «Մղձուկը» չգիտեր, վոր գեղի են մյուս ծայրին գեղացիք նրանց արդեն ընդունել ու խաղաղ հրավերի ճառ են ասել:

— Բարով, հազար բարին եք յեկել, մեր գլխին տեղ ունիք, մեր գեղացիք վաղուց էյին ձեզ սպասում...

— Գեղացիք էյին մեզ սպասում, դու խո չէյիր սպասում, «քյոխվա»,— ընդհատելով «քյոխվին», մեկը ձիուց վար թռավ ու մոտեցավ նրան: «Քյոխվեն» մի պահ հետ քաշվեց. հետ քաշվեցին նաև գյուղացիք:

Ազի Ասլումը ինչ վոր բան էր ուզում հարցնել, և ճամբա բաց անելով առաջ շարժվեց դեպի սուաշին խոսք ասող բոլշևիկը:

— Ասում եմ գեղացիք էյին սպասում, բա դու խոմ չէյիր սպասում, «քյոխվա» Մուկուչ,— կրկնելով այս խոսքերն անձանոթ բանակայինը, ձեռքի մի արագ շարժումով գլխից դուրս քաշեց մոթալի սև փափախը...

— Վայ, Սարգիս ջան, յես քու վոտերի տակի հողին մեռնեմ, բալա ջան, բացականչեց ազի Ասլումն ու նրանք փաթաթվեցին իրար:

Շատ ժամանակ հարկավոր չեղավ գյուղը ներքին թշնամիներից մաքրելու համար: Կարմիրների ճակատն առաջ էր շարժվում, հարկավոր էր շտապել, հետապնդել նահանջող թշնամու լքված ու գյուղերը թալանի մատնող խմբերը: Յեվ յերբ բոլշևիկ հեծելագործների վաշտը գյուղից դեպի դաշտն էր սլանում, ազի Ասլումի տան կտրին փողփողում էր հաղթանակի կարմիր դրոշը:

Այնտեղ տեղավորվել էր գյուղի ուղիղ հեղափոխական կոմիտեն:

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆԵՍՅԱՆ

ՁԵՐԳ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻՆ

Ձեր թափած արյան
ամեն կաթիլը,
Հանուն պայքարի
ու ազատության,
Մլել ե ինչպես
հատիկն ե ծլում—
Փողփողում ե վոնց
դրոշ հաղթության:

Դուք անվախ ընկաք,
Դուք անմահ ընկաք,
Անհավասար կռվում
Հաղթանակով ընկաք:

Ձեր թափած արյան
ամեն կաթիլը,
Սեզ բոյ ե քաշել
հպարտ խոյանքով—
Յերկրում մեր մեծ
ու յերկաթավոր,
Յելել ե յերթի
անմոռաց փառքով:

Դուք կռվով ընկաք,
Անահանջ ընկաք,
Ստեպներում հեռու
Հաղթանակով ընկաք:

Այնպես կենդանի
վառ ե մեր հոգում,
Ո՛, ձեր հայացքը
ավինից ել սուր,

Ինչպես հաղթարար
առավոտն այն,
Ինչպես արևն իր
շողերով վառ:

Դուք կովով ընկաք,
Աննահանջ ընկաք,
Ստեպներում հեռու
Հաղթանակով ընկաք:

Նորից հուշերն են
վողողել վառ,
Անցյալը հեռու,
գիշերները մութ —
Դիակարգերը ձեր
անձեռագործ,
Յեվ աշնանային
հորիզոնը լուրթ:

Դուք մարտական ընկաք,
Արնաշաղաղ ընկաք,
Ստեպներում հեռու
Հաղթանակով ընկաք:

Մենք գիրք փորեցինք
ձեր գիրքի մոտ —
Նորից կովի մտանք
ձեր գիրքի մոտ, —
Նորից կովի մտանք,
Նորից առաջ անցանք,
Յեվ հաղթություն տարանք
մինչև առավոտ:

Դուք յերգերով ընկաք,
Ուռաներով ընկաք,
Ստեպներում հեռու
Հաղթանակով ընկաք:

Յերբ տոն ենք տոնում
խնդությամբ առատ,

Չկարծեք լալիս
կամ յերգում ենք սուգ
Մեր հոծ շարքերի
գրոշների տակ,
Ո՛ր, հիմա քայլում եք
մեզ հետ և դուք:

Դուք մարտական ընկաք,
Արնաշաղաղ ընկաք,
Ստեպներում հեռու
Հաղթանակով ընկաք:

Ո՛ր, հիմա քայլում եք
մեզ հետ և դուք,
Մեր հոծ շարքերի
գրոշների տակ. —
Դուք վոր կովի յելաք
ու մեռաք պատվով,
Այն աննահանջ կովում
դարձաք նահատակ:

Յերբ տոն ենք տոնում
Ննդությամբ առատ,
Չեր հաղթանակի
Հազար բարիքով —
Կարծես ծաղկազարդ
Մայիս է բացվել,
Ու ջահել ենք մենք
Չեր անմահ փառքով:

ՀՈՎԻԿ ՀՍԿՈՒՅՑԱՆ

ՎՈՐԱԿԻ ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ՄՈՏ

Արե՞ն իր յերբեմնի ցուրտ ճառագայթներն եր սրսկում կա-
լատեղերի, արտերի մշակների հանգստացող տասնյակ խում-
բերի վրա, վորոնք բազմած սեղանների շուրջը նախաճա-
շում եյին:

Կալատեղից քիչ հեռու վառվում եր մի մեծ խարույկ: Խա-
րույկի շուրջը հավաքված մարդիկ ասում, խոսում, ծիծա-
ղում ու կատակում եյին որվա նորություններից: Խա-
րույկի շուրջն եյին հավաքվել նաև կոլտնտեսությունների
հին գվարդիայի վորակի տեսուչները: Նրանք քիթ քթի
տված խորհրդակցում եյին, քննատարում ու վիճում մի
ինչ վոր լուրջ խնդրի շուրջը: Նրանց չեյին ընդմիջում կա-
տակասեր յերիտասարդները:

Տրակտորիստները, վորոնք ամեն տեսակ կատակերգու-
թյան սովոր են, գիտեն աշխատել և կատակել, գիտեն հայ-
հոյել և սիրել: Կազմակերպված են վորպես կոլտնտեսա-
յին շինարարության առաջավոր մարտիկներ: Շատ քիչ դեպ-
քերում են թույլ տալիս աշխատանքի հավասարակշռու-
թյունը կորցնել, բայց այդ որը նրանք լուրջ եյին, խոհուն
և մտածկոտ: Նրանք անհանգստությունից կալատեղը ծայ-
րե ծայր չափում եյին ու կրկին վերադառնում «կոլտն-
տեսային հին գվարդիայի» բրիգադի մոտ ու սպասում
նրանց վորոշմանը: Քիչ հետո լոբոմորիլի շշակը նորից
կառլի, աշխատանքի կկանչի սոցիալիստական դաշտերի
մշակներին: Սակայն բացակայում է կշռարարը:

— Կշռարարը չկա, բաց չի թողնված սերմացուն, տրակ-
տորները 24 ժամից ավելի պարապ պիտի մնան:

Բրիգադիւր Մկրտչյանը պատասխանում է. — «Իմ իրա-
վունքից վեր է, յես առանց կշռարարի իրավունք չունեմ
բաց թողնելու սերմացուն»: Կոլտնտեսության վարչության
անդամները խորհրդավոր կերպով լուում են, ձեռնպահ են
մնում պատասխանատու աշխատանքից: Ինչպես յերևում է,
նրանք լավ չեն ըմբռնել որենքի իսկական իմաստը:

Կոլտնտեսության վարչության անդամ «կոմունիստ» Յե-
դիշը շրջում է դեզերի շուրջը և չի ուզում մոտենալ գոր-
ծին, ոգնել, արձակել խճճված հանգույցը:

— Թող արձակեն, յես կմոտենամ, կղեկավարեմ—մտա-
ծում է նա:

Տրակտորների 24 ժամ պարապուրդ անելու բոթը հաս-
նում է ցանքսադաշտերի բոլոր ծայրամասերը: Բոլոր կող-
մերից հավաքվում են հարվածայինները, ոգտագործում են
իրենց հանգստի ժամն ոգնելու ու վճռելու գործի եյական
կողմը: Ահա կոմյերիտ բջիջի քարտուղար Սերոբը, կոմյե-
րիտական ղինակոչիկ հարվածային Պողոսն ու Հարություն-
յան Անդրանիկը: Նրանք գալիս են խճճված հանգույցն ար-
ձակելու:

— Ո՞վ կարող է խախտել կենսկոմի ու ժողկոմխորհի
վորոշումն՝ առանց կշռարարի ու մեքենատրակտորային կա-
ւանի դերեկտորի կարգադրության կալատեղից հացահա-
տիկ բաց թողնելու.— Այսպես եր մտածում կոլտնտեսու-
թյան ստաժավոր սաբոտաժնիկ Մկրտչյան Անդրանիկը:
Այդ իսկ միտումներով նա յոտենում եր իր գիտցած ու
ճանաչած կոլտնտեսականներին ու նրանց ականջին փըս-
փսում.— «առանց կշռարարի սերմացուն բաց թողնելը
վնասակար է. մեզ բոլորիս, բրիգադիւրին դատի կտան: Ժո-
ղովում ձեռնպահ մնացեք, մատ մի բարձրացրեք, դեմ
դուրս յեկեք սերմացուն բաց թողնելու»: Նա շրջում եր
հավաքվածների շուրջը, հայհոյում կշռարարին:

Նալին ու մեխին խփելով, պատասխանում եր Անդրա-
նիկը, յերբ կոմյերիտ բջիջի քարտուղար Սերոբը, վորպես
կուսկազմակերպիչ, մի քանի ընկերները հետ խորհրդակ-
ցելուց հետո, բաց արավ բրիգադի դաշտային ժողովը,
տրակտորիստների ու կոլտնտեսության հին գվարդիայի
վորակի տեսուչների մասնակցությամբ:

— Ընկերներ, — սկսեց Սերոբը, — կշռարարը հատուկ իրա-
վունքով այսոր քաղաք է գնացել, բայց նա իր անփու-
թության հետևանքով մոտացել է, սերմացուն չի կռել, չի

հանձնել բրիգադրին: Մեզ այսօր հարկավոր է մեկ սոնն սերմացու: Յեթե մենք այդ չունենանք, արակտորները պարագուրդ կանեն ամբողջ 24 ժամ և դեռ դուցե ավելին:

— Կենտկոմի և Ժողովուրդի վորոշման համաձայն այդպիսի խնդիր բրիգադային ժողովին դնել իրավունքից դուրս է: Մենք դրանով կխախտենք կուսակցության և կառավարության վորոշումը կշտարարների և ՄՏԿ դերեկտորների իրավունքների մասին.— Սերոբի խոսքն ընդհատելով ասաց Մկրտչյան Անդրանիկը:

— Ընկերներ, մենք բոլորս ել ճանաչում ենք «մեր» Անդրանիկին: Իսկ ես Անդրանիկն եմ, վոր գարնանացանի ժամանակ իր յեղները սատկեցնելու դուռը հասցրեց ծեծելով ու սոված թողնելով, վորի համար նա դատի յենթարկվեց: Նրա նպատակն եր, վոր մենք չկատարեյինք գարնանացանի պլանը և սովի մատնեյինք մեր կուսնտեսուսթյունը: Անդրանիկի այսօրվա նպատակն է, վոր մեր արակտորները պարագուրդ անեն և մեր կուսնտեսուսթյունը հետ մնա աշնանացանի պլանի կատարման գործից: Յես առաջարկում եմ նրան ել խոսք չտալ.— վերջացրեց իր խոսքը հարվածային կուսնտեսական Հարությունյան Անդրանիկը:

— Բուզասյոր, քեզ խոսք տան, վոր ճառ ասես.— Ղլաձգորեն վրա բերեց Մկրտչյան Անդրանիկը:

— Իսկ ժողովրդական դատարանի առաջ կկանգնես այս թվի հոկտեմբերի 28-ին, դու, յեգիպտացորենի գող, կուսնտեսային սեփականությունը հափշտակող, դեռ լեզու ունես ընդհանուր ժողովի առաջ խոսելու և դա եմ ժամանակ, յերբ մի ժամ առաջ քո մոտից բռնեցին մեկ պարկ յեգիպտացորենի գլուխներ:

Հակահարվածը սուր եր և տեղին, բայց բրիգադում միայն սաբոտաժիկ Մկրտչյան Անդրանիկը չեր. ահա նրա թիկնապահները՝ Հակոբյան Ղազարը, Շահվերդյան Մանուկը, Ավագյան Շուշանիկը և Իսկովյան Վարդուհին, վորոնք հազար ու մի ստերի տոպրակ են կախել կուսնտեսուսթյան կարտեղերի դեղերից, կախիչի կողքերից և անգրագետ, քաղաքանապես բորիկ կուսնտեսական Խաչատրյանի թիկունքից, վորն իր 22 տարվա ջահել հասակում ամբողջ տարվա մեջ ունի միայն 74 աշխոր: Մի որ «հիվանդ», մի որ «ցուրտ է», իսկ մյուս որն ել «հացի գնացի» պատըրվակների տակ պարբերաբար բացակայել է դաշտային աշխատանքից: Իսկ նրա ընկերը, նրա տարիքին, դեռ նրա-

նից ել քիչ բարակ ու նիհար Պետրոսյան Պետրոսը մինչև հոկտեմբերը ունի 286 աշխոր: Սրանով պետք է բացատրել այն, վոր Վորոշելովի անվան կուսնտեսուսթյունն այսօր, ինչպես և գարնանացանի ժամանակ Մյասնիկյան ռայոնի ամենահետամնաց կուսնտեսուսթյունն է:

Շնորհիվ կուսնտեսուսթյունում իշխող դիմագրկության, կուլակային սաբոտաժիկներին բոլշևիկյան հակահարված շտաբու հետևանքով, գարնանացանի ժամանակ աշխատանքի վորակը ինքնամոռացության է տրվում: Աշխատանքի ողակներից շատերը պայքարել են միայն պլանների կատարման համար:

Պլանները կատարվում են, բայց արդյունքն արդեն կարտեղումն է պարզվում:

Յեթե Մյասնիկյան ռայոնի բոլոր կուսնտեսուսթյուններին կուսնտեսականներն իրենց աշխատած ամեն մի աշխորի դիմաց ստանալու յեն 8—14 կիլո հացահատիկ, ապա Վորոշելովի անվան կուսնտեսուսթյան կուսնտեսականներն իրենց ամեն մի աշխորի դիմաց ստանալու յեն ամենաշատը 6 կիլո հացահատիկ: Իսկ ավելին: Յեթե Կալինինի անվան կուսնտեսուսթյան հարվածայնուհի Յաշկովա Նինան իր մինչև հոկտեմբերի 1-ը աշխատած 180 աշխորի դիմաց ստանում է 1800 կիլո հացահատիկ, իսկ Վորոշելովի անվան կուսնտեսուսթյան հարվածայնուհի Պետրոսյան Թուշկը իր մինչև հոկտեմբերի 1-ը աշխատած 180 աշխորի դիմաց ստանալու յե միայն 975 կիլո:

Այսպես, Թուշկի, Պողոս, Աստղիկ և նրանց նման տասնյակ առաջավոր հարվածայիններն այնքան հացահատիկ չեն ստանում, վորքան մյուս կուսնտեսուսթյունների հարվածայինները: Յեվ դա շնորհիվ նրան, վոր կուսնտեսուսթյան մի շարք ղեկավարները, անգամ կուսնտեսուսթյան նախագահ Ղարաբյոզյան Մարտիրոսը փոխանակ հաշվի առնելու իրենց կատարած սխալները գարնանացանի ընթացքում և ըստ այնմ կազմակերպելու բոլշևիկյան գործաշնանացանի համար, ընդհակառակը, աշխատում են արդարացնել իրենց՝ կուլակային մերկացված փաստարկումներով:— Չորակն է մեղավոր, վորովհետև ձորակի յերկարությամբ պարբերաբար անցնում են սև մշուշոտ ամպեր, կծկում ու քաշում են հասած ցորենի հատիկները և պակասեցնում բերքատվությունը: Այսպես, միայն այսպես են պատճառաբանում կուսնտեսուսթյան նախագահ-

Մարտիրոսն ու վարչության անդամ Յեղիշը: Այսպես են ասում կուլակային ագիտատոր Անդրանիկը, Ղազարն ու Մանուկը: Այսպես են տեսնում պորժը բոլշևիկյան զգոնությունը կորցրած «կոմունիստները»: Չտեսնելով այն, վոր իրենց տեղական սահմանափակ խճճվածությամբ իր ժամանակին չեն ոգնել կուսբլիշի քարտուղար Ղարազյոզյան Արամին, թողել են նրան մենակ հարվածայիններին կազմակերպելու, գարնանացանի ընթացքում վորակավոր աշխատանք կատարելու ասպարեզներում:

— Չորակն է մեղավոր, մեղավոր են բնության մշտական մշուշն ու ամպերը, վորոնք անցնում են ձորակի վրայով: Յեվ մեղավոր է կրկող արևը.— այսպես են բարեհաճում կոլտնտեսության ոպորտունիստները ցանքսադաշտերի ամեն մի հեկտարից հինգ ցենտներ հացահատիկ ստանալու մասին: Յեվ դա այն ժամանակ, յերբ Մյասնիկյան ռայոնի բոլոր կոլտնտեսություններն անխաիր կերպով ամեն մի հեկտար ցանքսադաշտերից ստացել են 12-ից 19 ցենտներ հացահատիկ: Մշուշն ու ամպը, ցորեն «վառող» արևը միայն Նիսիկի թաղի կոլտնտեսության արտերի վրայով են անցել, կծկել ու քաշել են կոլտնտեսության հացահատիկն ու բերքը պակասացրել: Ահա Սերոբի գումարած այսորվա ժողովը: Կոլտնտեսության նախագահը դաշտում չկա: Քաղբաժնի կողմից շտապ գործով ռայոնի կենտրոնը կանչված կուսբլիշի քարտուղարը բացակայում է կոլտնտեսությունից և դրա համար ել կոլտնտեսության առանձին կոմունիստներին, կոմյերիտականներին և հարվածայիններին թվում է, վոր իրենք անգլուխ են մնացել: Ահա թե ինչու կուլակային ստաժավոր սաբոտաժնիկ Մկրտիչյան Անդրանիկն ու մյուսներն սկսել են գլուխ բարձրացնել կոլտնտեսության մեջ բրիգադային ժողովում:

— Վորակի տեսուչ՝ ծերուկ պապիներս վորոշեցինք կազմել դաբահաթ (ակտ) վեսովչիկի վրա: Մեր անձնական պատասխանատվությամբ պետք է բաց թողնենք տրակտորներին ցանքսի համար մեկ տոնն սերմացու ցորեն, — աջ ձեռքը վեր բարձրացնելով հայտնեց այդ վորոշումը ընդհանուր ժողովին վորակի տեսուչ, 70 տարեկան Մարտիրոսյան Ծատուրը: Նա միջանասակ, բայց տարիների ծանրության տակ կծկված, կուչ յեկած մի մարդ է: Նրա սպիտակ մորուքը, բեխերը և հոնքերի վրա հաստացող յերկար ու սպիտակ մազերը ներդաշնակում էյին նրա խոր

ակոսներով կնճոռոտ դեմքին: Ահա այդ ծերուկը հայտնում է ժողովին իր նման ծերուկների վճռական վորոշումը:

Ժողովականների մի մասը Մկրտիչյան Անդրանիկի պոչականությամբ դեմ դուրս յեկան այդ վորոշմանը, բայց ջախջախվեց այդ դիմադրությունը հարվածային տրակտորիստների ու կոլտնտեսականների կողմից և ծափահարությամբ անցավ պապիների վորոշումը:

Սեվ լոբոմոբիլի շահկը նորից կանչեց, նորից սկսեց ցանքսադաշտերում տանյակ տրակտորների գոռոցը և զրնգաց կալսիչը խուրճ խուրճ ծամելով ցորենի դեղերը:

Գեղեցիկ է տափաստանի արշալույսը, յերբ կոմբայնի կլոր անիվի նման ֆոռալով վեր է սկսում բարձրանալ շիկահեր արեվը: Արեվի ճառագայթների տակ համառությամբ սկսում են իրենց պայքարը հողի բանուկ մշակները. մշակներ, վորոնք իրենց անմիջական դեկավարությամբ համայնական յերգով գործի յեն լծել տրակտորները, շարքացանները, փոցխերը, տափանները. հերկում ու ցանում են կոշտացած հողերը:

Գեղեցիկ է մեքենաների համերգը, վոր ներդաշնակորեն ախորդում են նոր և ունևոր կյանքը:

Գիշեր է: Կիսալուսինն արդեն մնաս բարով է ասել ցանքսադաշտերում տիրած աշխատանքային յեռ ու գեռին: Այդ լուսնկա գիշերին, բյուր աստղերի փայլվանքների տակ, տրակտորային ողակները հատ հատ վերցրել են ցանքսադաշտերի քառակուսի արձակ տարածությունները և հեռ ու առաջ պորտկում են սև հողն ակոս առ ակոս: Տրակտորային բրիգադիք Չերքեզյանը շրջում է տրակտորից տրակտոր և իր դիտողություններն անում տրակտորիստներին ցանի ու վարի մասին: Չերքեզյանը վստահ էր իր բրիգադի բոլոր անդամների վրա: Ինչո՞ւ վստահ չլինել, յերբ իր բրիգադը առաջավորների շարքումն է, գուցե շուտով գրվի քաղբաժնի կարմիր գրքում, վորպես աշնանացանի ֆրոնտում պայքարի առաջավոր դասակի: Առանձնապես բերքահավաքի և աշնանացանի ասպարեզում ձեռք բերած փայլուն հաջողությունները նրան դարձրել են ինքնագոհ, ինքնավստահ իր բրիգադի բոլոր տրակտորիստների հանդեպ: Յեվ իսկապես: Չերքեզյանի բրիգադը բերքահավաքի ասպարեզում, բացի այն, վոր կատարում էր որվա առաջադրանքները, նաև իր բրիգադի հանգստի ժամերին, կամ պարապուրդներին կազմակեր-

պուժ եր բուքսիր կոլանտեսուժթյան դաշտային բրիգադներին կալսի, դեզի ու հնձի ասպարեզում: Ահա տրակտորիստ Չիբիչյան Սաչերեսը: Լայն թիկունքով, սև աչքերով, թուխ ունքերով, կոմբայնի շրջող լծակների պես հաստ բազուկներով մի 24 տարեկան յերիտասարդ, վորը մեքենատրակտորային կայանի կազմակերպման սկզբի որից իր պատվավոր տեղն ունի կայանում, իսկ բաղբաժնի կազմակերպման առաջին որից անց ե կացված քաղբաժնի կարմիր գրքուշկում և պարզեվատրված ե բազմաթիվ անգամ: Սաչերեսը գարնանացանի ասպարեզում վոչ միայն տրակտորիստ եր, նաև աշխատանքի կազմակերպչիչ, պլանների կատարման առաջավոր մարտիկ: Այդպես ե աշխատել նա գարնանացանին, բերքահավաքին, և այժմ աշխատում ե աշնանացանի ֆրոնտում: Այսպես են աշխատում և աշխատել են Չերքեզյանի բրիգադի տասնյակ տրակտորիստները: Չերքեզյանը բոլոր տրակտորիստներին այդպիսի աչքով եր նայում և այդպես եր նայում տրակտորիստ Թշլանգյան Սարգսին: Դա այն Սարգսին ե, վորն իր բոլոր որական առաջադրանքները միշտ ել պարբերաբար կատարել ե:

Սարգսիսը 38 տարուց անց մի յերիտասարդ ե: Նրա սև բեխերը ներդաշնակում են նրա հետ սանրած սև մազերին, վորոնք ծածկված են կաշե կեպիով: Հագին ունի տրակտորիստի մաշված սև պենջակ, վորի յերկու կողմերի գրպաններում կոխում ե իր սև ու մրոտ ձեռքերը ազատ ժամերին: Նա լրջամիտ ե և խոհուն: Բրիգադիը Չերքեզյանը շատ անգամ յտում եր նրա խորհուրդները և ինքն անգամ Սարգսից այս կամ այն աշխատանքը կատարելու համար յորհուրդ եր հարցնում: «Այսպիսի տրակտորիստների մոտ ի՞նչ կարիք կա գնալու զիշերով, նամանավանդ, վոր նա բավական հեռու յե մյուսներից», — մտածում եր ինքն իրեն Չերքեզյանը:

Չերքեզյանը պարզամիտ եր և իր պարզամտությամբ միատեսակ վերաբերմունք ուներ բոլոր տրակտորիստների հանդեպ, այդ պատճառով ել նա շատ քիչ եր նայում ու հաշվի առնում աշխատանքի վորակը: Դա պետք եբացատրել նաև նրանով, վոր նա շվիկ եր իր բրիգադի հաջողություններով և հաշվի չեր առնում այն, վոր այդ հաջող աշխատանքում կարող ե և իր գործը կատարել յսցված և ունևոր կյանքին զիմադրող գազազած թշնամին:

Լուսնկա զիշերում քշում եր իր տրակտորը 5 հեկտարանոց քառակուսի տարածության մեջ տրակտորիստ Սարգսիսը: Նա արագ եր քշում, վորովհետեվ տրակտորին կցված յերկու գութանի 6 յոփերից միայն յերկուսն եյին պատում սև հողը, իսկ առաջին չորս յոփերը անցնում եյին միայն գետինը քերելով: Սարգսիսը գութանների առաջին յերկու յոփերը բարձրացրել եր, իսկ վերջին յոփերը սահմանված չափից ցածրացրել: Վերջին յոփերի լայն ակոսների հողը փռվում եր առաջին յերկու յոփերի տարածության վրա ու ծածկում կես մատի հաստությամբ սերմնապահեստից թափվող սրսռուն հացահատիկը: Ծածկված հացահատիկը, վորքան ել նրանք յոր ակսում թողված լինեն, ցուրտը կտանի, գարնան մոլախոտերը կխեղդեն:

— Վորոշիլովի անվան կոլանտեսուժյունն ել թող ունևոր կյանքի մասին յերազի—տրակտորի ջրապահեստը շուր յցնելու ժամանակ Մկրտչյանն ասաց Սարգսին:

— Նրանք թող իրենցն անեն, իսկ մենք մերը, — պատասխանեց Սարգսիսը:

— Մեր արատկորի ցանած արտը միայն սևանում ե, Դազար, — տախանը կանգնեցնելով ասաց Անդրանիկը:

— Սևանում ե, բայց մեր բանն ել լավ չի Անդո, մենք մեր արածում կսխալվենք և չարաչար կպատժվենք, այդ պատիժը մոտիկ ե:

— Դազար, վախկոտ ես, յեթե մեզնից ամեն մեկը որեկան 5 հեկտար փչացնենք, ել ուր կմնա ունևոր կյանքը:

— Յեթե Չերքեզյանի տրակտորային բրիգադում աշխատող 12 հարվածային տրակտորիստներից միայն մի Սարգսիս կա, միայն մի վխասարար, նրա արածը հիմարություն ե: Նրանք ունեն գարուններ, իսկ մենք միայն մի ցուրտ ձմեռ, ձմրան ցուրտն ու ձյունը գարնանը կհալչեն և մեր արարը կմերկացվի: Ինչքան ուզում ես գլխիդ դու տուր, բայց ասածը ճիշտ ե, — վերջացրեց իր յոսքը քիչ տարիքավոր Հակոբյան Դազարը:

— Չեղավ, Դազար. դու ել անպեսք ես, վախկոտ: Դու ել գնա բուզատյոր Հարությունյան Անդրանիկի, Սերոբի և մյուսների թեվ ու թիկունք դարձիր, — վրդովանքով պատասխանեց Մկրտչյանը քշելով իր տախանն առաջից:

— Ինչքան ուզում ես վրդովվիր, Անդրանիկ, կյանքը Սերոբներին ե, գարնանն ել նրանց արշալույսը կբացվի,

կպարզվի նաև մեր արարքն ու քո տրակտորիստի սխրագործությունը, —ինքն իրեն վնթփնթաց և ապա քչեց իր տափանը Վորոշիլովի անվան կոլտնտեսության հայտնի սիմուլյանտ Հակոբյան Ղազարը:

Կատարած վնասարարության և հին ու նոց կյանքի բախումների արանքում խարխափույ սիմուլյանտ Ղազարը չէր սխալվում: Արշալույսը դեռ չբացված գյուղից յեկան կոլտնտեսության հին գվարդիայի վորակի տեսուչների բրիգադը, բրիգադիւր Հակոբյան Թաթոսի գլխավորութեամբ:

Սյդ բրիգադի անդամն էր նաև մեզ ծանոթ — Հյուսիսային Կովկասի հին գվարդիայի յերկրային հավաքի պատգամավոր Մարտիրոսյան Ծատուրը: Նա կրկին փաթաթված իր հին մուշտակի մեջ, բռնել էր սայլակը քաշող գույգ ձիերի սանձերը: Չիերը թուշում են ցանքսադաշտերի նեզ ձանապարհով գեպի տրակտորային բրիգադը:

— Ծատուր, կանգնեցրու ձիերը, ես արար մի ստուգենք — ասաց 55 տարեկան բրիգադիւր Թաթոսը և 20 տարեկան յերիտասարդի պես սայլից ցած թռավ: Նրա հետ միասին վայր իջան Հարութը, Ալեքսանը և այլխառն մորուքով Հակոբը:

Իսա Չիբիչյան Սաչերեսի ցանած հողամասն էր: Նրանք վոտքով անցան ամբողջ արտի տարածությունն ու կրկին վերադարձան գոհականութեամբ:

— Ապրես, բալես, ապրես, դու սոցիալիզմի իսկական զավակն ես. — ասաց Սաչերեսին Ծատուր պապին: Սաչերեսը նրանց տեսնելով կանգնեցրեց տրակտորն՝ իր կատարած աշխատանքի մասին վորակի տեսուչների կարծիքն իմանալու: Յեկավ նաև բրիգադիւր Չերքեզյանն ու գյուղատնտես Չուվարյան Կարապետը: Նրանք 5 տրակտորներէ մի գիշերվա վարած ու ցանած 20 հեկտարանոց տեղը շրջեցին վոտքով, մի քանի անգամ ձեռքով փորեցին սև հողը, վարի թանձր ու նոսր լինելը գտան բավարար և լավ:

Նրանք դուրս յեկան ցանքսադաշտերից, նստեցին սայլը և ուզում էին գնալ կալատեղ կալսիչի աշխատանքն ըստուգելու: Ծատուր պապին սայլը չքչեց: Նա ձեռքը դնելով աչքերին արեւից պաշտպանվելու համար և սկսեց իր շուրջը նայել սայլի վրա կանգնած:

— Ծատուր, քչե, դըհա շատ գործ ունենք, պիտի կաթի ֆերման գնանք ետը, — շտապեցնելով Ծատուրին ասաց 69 տարեկան Հարութը:

— Սպասե, ես մեկ տեղը մենք չնայեցինք, հոն են աշխատում մեր Ղազարն ու Անդրանիկը, — պատասխանեց Ծատուրը, բրիգադիւր Թաթոսի աչքերին նայելով:

— Հոն կարիք չկա գնալու, պապիններ, այնտեղ մեր տրակտորիստ Սարգիսն է աշխատում, ուղարնիկ է, — մեջ ընկավ բրիգադիւր Չերքեզյանը:

— Ուղարնիկը ուղարնիկ է, համա նայելն աղեկ բան է, — անմիջապես վրա բերեց Ծատուրն ու սայլն ուղղեց գեպի 5 հեկտարանոց ցանքսադաշտը:

— Սյ պապիններ, ավելորդ է այնտեղ գնալը, յես նայել եմ. — ասաց գյուղատնտես Չուվարյանը սայլը նստելով: Բայց ծերունիները իրենց համառութեամբ բանի տեղ չդրին նրա ասածը:

— Ծերունիներն այնքան խելը չունեն, վոր համեն մինչև արտի կենտրոնը, իսկ չորս կողմը մենք կրկին վարել ենք, — ասաց Ղազարյան Անդրանիկն ինքնագոհ կերպով: Յեվ իսկապես տրակտորիստ Սարգիսը հինգ հեկտարանոց ցանքսի չորս կողմը կրկին վարել էր՝ գուժաններէ բոլոր խոփերը գործի դնելով:

«Չորս կողմը լավ է, կտեսնեն ու կերթան» մտածել էր «հարվածային» տրակտորիստը: Սակայն ծերունիները սայլը ցանքսից դուրս կանդնեցնելուց հետո խմբով մտան վարած արտը և սկսեցին բարձրանալ վեր: Միայն գյուղատնտես Չուվարանը մոտեցավ Սարգսին, Անդրանիկին, Ղազարին և նստեց նրաց հետ նախաձաշելու:

— Իու ինչո՞ւ չես գնում նրանց հետ, ընկեր ազրոնում, ասաց նրանց Ղազարը:

— Ի՞նչ գնամ, յես արդեն նայել եմ: Ապրեք, լավ է ձեր աշխատանքը, — պատասխանեց նրան գյուղատնտեսը մաճնի լիք գլխի բրդոցը կուլ տալով:

Նրանք խոսում էին ու կատակում, յերբ ծերունիները իրար գլխի հավաքված արան էին փորփորում ձեռքի փայտերով ու մատներով: Միայն Ծատուր պապին նրանցից մի հարյուր քայլ հեռավորության վրա արտի կենտրոնից քիչ հեռու կանգնած վնթփնթում էր ինքն իրան:

— Սյդպես, — ասավ ինքն իրեն Ծատուրը և կանչեց իր ընկերներին:

— Ծն, սա վոտներիս տակ փափուկ հող չե, չվարված արտ է, — ասաց բոլորին Հարութ պապին ու կանգ առավ կրկնակի վարից քիչ հեռու: Մարտիրոսյան Ծատուրը մո-

տեցավ նրանց: Նրա ջրակալած աչքերը կարմրել էյին բարկությունից, իսկ վոտքերը գողում էյին:

— Ղաբաղաթ (ակա) սաստավիտ ընենք ուղարկենք պոլիտոդեկին, իսկ կլասավոյի վրագները — տրակտորիստի, ագրանոմի քիթ ու պուռնակը ջարթելու համար: Ծն, ինձնից յեղել եք, ինձ կխաբէք, սա ձեր արածը ինչ է, — ձեռքի փայտը գեանին խփելով ասաց Ծատուր պապին տրակտորիստ Սարգսին, բրիգադիրին և գյուղատնտեսին, վորոնք նույնպես թողած իրենց նախաճաշը յեկել էյին ծերունիների մոտ:

— Ընկեր Թշանգյան, մյս է քո հարվածայնությունը, — մինչև ականջները կարմրած ասաց բրիգադիրը Չերքեզյանը յերկու ձեռքերը վեր բարձրացնելով: Գյուղատնտես Չուվարյանը գլուխը կորցրել էր, չեր իմանում ինչ անի:

— Ընկեր Սարգսի արածը խիստ սխալություն է, ակա սաստավիտ անելու կարիք չկա, թող մի անգամ ել վարի, վերջացավ գնաց, մյուս անգամ այսպիսի բաներ չի անի, — ծամծված բառերով մեջ ընկավ Մկրտչյան Անդրանիկը:

— Իու այս գործին մի խառնվիր, դու գնա յեգիպտացորեն գողացիր, դու ել նրա պես կլասավոյ վրագ ես — պատասխանեց նրան վորակի տեսուչ, բրիգադիր Հակոբյան Թաթոսը:

— Մենք համ ակա կկազմենք, համ ել կստիպենք ձեզ յերկրորդ անգամ վարելու:

Այս ընդհանուր վեճի ժամանակ յեկան նաև կոլտնտեսության նախագահ Մարտիրոսը և վարչության անգամ Յեղիշը, կոմյերիտ բՆԻՂԻ քարտուղար Սերոբը և ուրիշները: Նրանցից խոշոր մասը, այդ թվում նաև կոմունիստ Յեղիշը գեմ էյին ակա կազմելուն. — «կրկնակի անգամ վարել, գործին վերջ տալ», մտածում էյին նրանք, սակայն ծերունիները համառում էյին և այդ համառության ոգնում էյին Սերոբը և մյուս հարվածայինները:

— Ընկ. Մարտիրոս, յեթե դու դեմ ես ղաբաղաթ կազմելուն (կրկին մոռացավ ակա խոսքը Ծատուր պապին), յես վորպես կաչեսավոյի ինստրուկտոր, քո վոպրոսը պատավիտ կենեմ փարա յաչեյքային, վոր դու կլասավոյ վրագի զաշխտնիկ ես, — սպիտակ ու յերկար բեխերը վեր ու վար անելով ասաց Ծատուր պապին:

— Ճիշտ է ասում Ծատուրը, — ձայնակցեցին նրան վորակի տեսուչները, իսկ Սերոբն ու հարվածային Պողոսը ժպտում էյին Ծատուրի համառության վրա ու առիթ էյին փնտռում նրան պաշտպանելու համար:

— Ակա պետք է կազմել և այդ ակտում ցույց տալ նաև այն, վոր յես նույնպես մեղավոր եմ այդ վնասարարության մեջ, — ասաց բրիգադիրը Չերքեզյանը:

Փոքրիկ սայլակից իջավ կուսբՆԻՂԻ քարտուղար Ղաբաղոզյան Սրամն ու մոտեցավ նրանց: Նա գործի յեղելության մանրամասնորեն ծանոթանալուց հետո, վորակի տեսուչ ծերունիների անունից մի ընդհանուր ակա կազմել տվեց և ուղարկեց քաղբաժնին:

Ծերունիներից միայն Սաչատրյան Հակոբն ստորագրեց ակտը վորպես գրագետի, իսկ մյուսները գունավոր մասխանների ծայրը քսելով իրենց բուլթ մատերին, թքոտեցին, ապա կնիքի նման կնքեցին իրենց ազգանունների դիմաց:

Արեվն արդեն բարձրացել էր և արեվի հետ դաշտային աշխատանքները նոր թափ էյին առել: Տրակտորների սերմացունների, կալսիչների և նրանց ղեկավար հարվածայինների համերգը լրացնում էր կոլտնտեսային հին գվարդիականները — աշխատանքի վորակի տեսուչների և սայլի հենդոցը, վորը գնում էր գետի ցանքսադաշտերը, կալատեղերը՝ մերկացնելու դասակարգային թշնամի տարրերի մեքենայությունները և ոգնելու հարվածայիններին — սոցիալիստական դաշտերի բանուկ մշակներին:

ՂԱՌՆԱՆՔ ՄԱՔՈՒՐ, ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ

Հարվածային Մուքել պապին,
Ճերմակ մորուք մի ծերունի,
Ընտանիքի հետ միասին,
Հազարից վեր աշխոր ունի:

Աշխորերի զիմաց եսոր,
Ստացել ե հասուն մի բերք,
Արևի պես վառ ու բոսոր,
Հացահատիկ ու շատ մթերք:

— Լավ, — ասում ե Մուքել պապին,
Շատ ուրախ եմ սրա համար,
Սահման չկա մեր վաստակին,
Մինչև գարուն, մինչև ամառ:

Ստալինի սասածի պես,
Ունևորի նման կապրենք,
Կոլխոզներին կտանք նոր տեսք,
Բոլշևիկյան կղարձներք:

Ճիշտ ե ասում Մուքել պապին,
Մեր ուժերը պիտի լարենք,
Ընտանիքում կոլխոզային,
Բոլշևիկյան նոր կյանք վարենք:

Մուքել պապին մեզ որինակ,
Պահակի պես ժիր ու արթուն,
Գնում կոլխոզ-գրասենյակ,
Ամեն անգամ թերթ ե կարդում:

Յեթե մի որ ասեն նրան,
Թե գիր-գրիչ քո բանը չի,
Կբարկանա ու պատասխան
Կտա մի շինջ:

— Ո՛վ ե ասում իմ բանը չի,
Հիմա մենք նոր կյանք ենք վարում,
Ամեն մի մարդ գիր ճանաչի,
Ու թերթ կարգա մեր աշխարհում:

Հասկանում եք ինչ եմ ասում,
Կուլտուրական պիտի լինենք,
Վոր արտերի բերքով հասուն,
Մաքուր ու նոր կենցաղ շինենք:

Մուքել պապու նման եսոր,
Մեր ուժերը պիտի լարենք,
Աշխատանքի թափով հզոր,
Կուլտուրական կենցաղ վարենք:

Հաճախ գնանք թատրոն, կինո,
Ռադիո-ակումբ, գրադարան,
Աշխատանքի թափով մի նոր,
Դառնանք մաքուր, կուլտուրական,

ՏՐԻՈԼԵՏՆԵՐ ԱՇՆԱՆԱՑԱՆԻ ՀԵՐՈՍԻՆ

Հասկերի պես դեղին
 Ժպիտ ունես պայծառ,
 Հայացք ունես համառ,
 Հասկերի պես դեղին:
 Խինդ ես դարձել գյուղին
 Գործով պայքարավառ,
 Հասկերի պես դեղին,
 Ժպիտ ունես պայծառ:

Գովքդ ինչպե՞ս չասեմ,
 Չերգեմ ուղիդ կյանքի,
 Յեռուն աշխատանքիդ
 Գովքն ինչպե՞ս չասեմ:
 Յերբ քո գործը վսեմ
 Խինդ ե դարձել անգին,
 Գովքդ ինչպե՞ս չասեմ,
 Չերգեմ ուղիդ կյանքի:

Կոլտնտեսական արտում
 Դու դարձել ես հերոս,
 Ու վառել ես փարոս
 Կոլտնտեսական արտում:
 Պահակի պես արթուն,
 Տրակտորի պես դժոժդ,
 Կոլտնտեսական արտում
 Դու դարձել ես ուղղորդ:

Լույս գիշեր ե մի վառ
 Թով ու հերոսական,
 Մաքուր կաթի նման
 Լույս գիշեր ե մի վառ:

Քո տրակտորը համառ
 Դեռ հերկում ե տոկուն,
 Լույս գիշերով այս վառ
 Թով ու հերոսական:

Հերոսի պես տոկուն
 Հողը վարենք խոպան,
 Ցանքս անենք աշնան
 Հերոսի պես առկուն:
 Ու յեռանդով անհուն
 Արտում կոլտնտեսական,
 Հերոսի պես տոկուն
 Ցանքս անենք աշնան:

Դե, Սերգո ջան, քչի՞ր
 Քո տրակտորն առաջ,
 Ու նոր մի ուժ առած,
 Սերգո ջան, դե, քչի՞ր:
 Թող թշնամին հիշի,
 Վոր բերք ունենք առատ,
 Դեհ, Սերգո ջան, քչի՞ր,
 Քո տրակտորն առաջ:



ՀՈՎԱՍ ԲԻՉԻՆ

Նվերում եմ կրտսնոտեսային հին գվար-
դևայի ծերուկ բրիգադերներին

Բերքի տոնին —

Հերոսական ջերմ յեռանդի այդ վեհ ժամին,
Հպարտ սրտով
Կուռ շարքերն են հուզվում հիմա հերոսների:
Հովաս բիձա,
Քեզ ել հիմա հերոսների կուռ բանակում,
Տեսնում եմ յես
Ճերմակահեր, դու ել հիմի յերգ ես յերգում:

Բայց դու թափով

Դեռ առույգ ես, կյանքով հպարտ՝ յերիտասարգ.
Աշխատում ես,
Չես ընկձվում, Հովաս բիձա, կամքով հպարտ:
Ու դու այսօր
Կողոզային հին գվարդիայի բրիգադերն ես,
Բողջկիյան բարձր բերքի հմուտ վարպետ,
Քաջ լիազոր:

Յեզ ալեգարդ

Բրիգադիդ անգամներին հասակակից,
Դու հսկում ես

Յեզ ուժ ապիս, վոր յեռանդով լծվեն գործի.—
Լավ փորձերը փոխանակեն, վոր բերքը մեր
Բարձր աճի,
Խորհրդային յերկիրը վեհ, բարձրանա վեր
Ու նվաճի:

Յեզ յես այսօր,

Հովաս բիձա, վեհ խինդով եմ նայում վրադ
Ու հիշում եմ —

Ծերուկ պապիս, հին որերի մահը տարավ...

Յես հիշում եմ

Դոմի ողան, հաստ թաղիքով ծածկված քուրսին —
Ո՛ր, հիշում եմ

Նրանք նստած հեքյաթ եյին պատմում հին-հին:

Ու միշտ այդպես...

Հին խոհերով, պապս մեռավ կյանքի հետ հին.

Իսկ դու, իսկ դու

Հովաս բիձա, ջերմ ձուլվեցիր այս մեր դարին —

Պայքարելով,

Քեզ հետ անցանք պապիս անցած հեռու ուղին:

Դու ել, դու ել

Հովաս բիձա, ջերմ ձուլվեցիր այս մեր դարին:

Հերոսներից

Հետ չես մնում, դու մրցակից նրանց թափին,

Հեքյաթները հին,

Կախարդական, քեզ չի գերում գոմի ողան:

Յերբ զնգում ե

Ժամն հանգստի — քաղաքոց ես դու շտապում,

Ազրոնոմիայի

Կանոնները լավ հասկանում, անգիր անում:

Լավ վորակի,

Բերքի համար, պայքարի ես մտել անքուն.

Բազուկներին

Քո դողդոջուն, Հովաս բիձա, վողջո՛ւյն, վողջո՛ւյն:

Ինչպե՛ս, ինչպե՛ս,

Յես չյերգեմ բրիգադիդ թափը հզոր,

Բեզուն բերքի,

Մեր կոլխոզի ջերմ բարեկամ, քաղ լիազոր:

ՏՐԱԿՏՈՐԸ

Կոլխոզի արտերում անձիր
Տրակտորն է վարում հպարտ՝
Հերկում է սև հողը տոչոր. —
Տրակտոր իմ, վարիր հպարտ:

Հարվածային թափով ուժգին
Տրակտորն է վարում հպարտ.
Կուլակի դեմ տարած կովում,
Կուլեկտիվի կամքն է անպարտ:

Կոլխոզի արտերում անձիր,
Տրակտորն է վարում հպարտ՝
Հերկում է սև հողը տոչոր. —
Տրակտոր ջան, վարիր հպարտ:

ԵՆԵԿՏՐԱՄՈՒՐՁԸ

Հը՛փ
Հը՛փ
Հը՛փ...

Վար է իջնում ամբողջ թափով
Ելեկտրամուրճը հսկայական,
Վտաքի թեթև մի հպումով,
Վար է իջնում հսկա թափով:
Ծեծում, ձեծում, ձեծում նրան —
Կաս ու կարմիր այս մետաղին,
Վոր փափկացել, մոմ է դառել
Հուր բոցերից վառարանի:

Հը՛փ
Հը՛փ
Հը՛փ...

Տեսք ինչպես կուչ է գալիս,
Տեսքն է փոխում ամեն զարկից,
Ամեն զարկից նոր տեսք առնում,
Մերթ կարմրում, մերթ գունատվում:
Կոշտ ու կոպիտ այս մետաղը,
Վոր դարերով քանի՛ քանի՛
Քուն եր մտել խոր ու հանգիստ
Լեռների տակ խոր շերտերի:

Բայց ահարկու մեր զարկերից,
Մեր պայքարի վառ քրտինքով,

Նա փոփոխվեց, նոր ձև առավ:
Նոր տեսք առավ, դարձավ անիվ,
Անիվը մեծ այն կամբայնի,
Վոր որեկան մենք տալիս ենք
Հազարներով մեր դաշտերին:

Հը՛փ
Հը՛փ
Հը՛փ...

Ահա այդպես կյանք է առնում
Բողջիկիկյան մեր պայքարից,
Ձեզ ստանում, նոր շունչ, վողփ,
Ամեն մետաղ, միայն մի հանք,
Ամեն մի նյութ, նույնիսկ չնչին,
Դառնում է սոկ, դառնում սուրբին,
Դառնում մոսուր, դառնում մաշին —
Նոր շունչ տալու ու ահեղ թափ
Մեր այս յերկրին լայնածավալ:

Հը՛փ
Հը՛փ
Հը՛փ...

Իջիր իմ մուրճ ելեկտրական,
Դու լավ ընկեր իմ պայքարի,
Իջիր ահեղ, իջիր թափով,
Վոր քրտինքով այս պայքարի
Նոր յեռանդ ու շունչ տանք նրանց —
Մեր պողպատե յերգին կարոտ
Անծայրածիր մեր դաշտերին:

Հը՛փ
Հը՛փ,
Հը՛փ...

Դեռ զիշեր է, մինչև վաղը
Հարվածելով ու յերգելով,
Մենք կերտում ենք, մենք պայքարում,
Վոր առաջին հնգամյակում
Նոր շունչ առած այս մետաղով,
Մենք հեղեղենք մեր դաշտերը:

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՍԼՈՎ

ԾՈՎԻ ՅԵՐԳԸ

Յես սիրում եմ անհուն թովչությունը ծովի,
Հավերժահարս դարձած ալիքներն այն վես,
Վոր յեղնում են, աճում զեյփուռաթև հովից
Ու կազմում են անուշ մի վիթխարի հանդես:

Ինչ խաղաղ է շնչում այգաբացի ժամին
Ծովը, վորպես մի քույր, վոր ծփում է մեղմիկ.
— Ո՞ւր է այն մոռթը ջրերկրյա թշնամին,
Վոր ուզում էր սիրաս իր նավերով սեղմի:

Նա քաղաքն իմ յեկավ ալիքներիս նստած,
Ու նավերով բերեց թնդանոթներ բազում,
Իր բիբերին կապույտ նա գրել էր հստակ —
— Յես գալիս եմ հեռվից ու ձեր նավթն ուզում:

Բայց բարձրացավ իր դեմ մի վիթխարի բազուկ
Ու բռունցքով ուղեց այն մոռթը ջարդել —
Գնդացիին էր ճչում, թնդանոթը հուզում,
Հրացանն էր բացում արնաման վորդեր:

Հով իմ կապտաժպիտ, անեղրական ու վեհ,
Բացվել է սիրտն իմ սեզ ալիքներիդ յերգից,
Տուր ինձ թափ ու կորով ու մարտական թեպեր,
Վոր չթողնեմ խինդդ փոխվի արնոտ վերջի:

Մի որ մեր դեմ կեղնի այն մոռթը դեղին
Ու ծովերից կզա ժանիքները սրած,
Կզա, վոր մեր թափը, մեր պայքարը շեղի
Ու ջնջի մեր ձեռքով պատմությունը գրած:

Մաքրիր սվինը քո ու միշտ զգաստ յեղիր
Մինչև մարտական փողեր ու շեփորներ հնչեն,
Մենք չենք թողնի նրանց՝ մուռթներին դեղին,
Վոր մեր ձեռքով գրած պատմությունը ջնջեն:

Պոետ, մինչև հիմա դու յերգեր ես յերգել
Մեր պայքարի ու հաղթանակների մասին,
Յե՛վ սրտահույզ ու վառ քո խոսքով գրել—
Զինել ես միտքը մեր կարգերի դեմ զազիր...

Հետ մի կանգնիր, ընկեր, մեր որերի վազքից,
Թող յերգերդ հիմա շեփորաձայն հնչեն,
Յերգեն յերգը նրա այն շինարար բազկի,
Վոր աշխարհում արդեն գիտե հանգիստ շնչել:

Թող յերգերդ, պոետ, դառնան ցինկ ու յերկաթ,
Դառնան շեփոր մարտի ու պայքարի թևեր,
Ու վողջունեն նրանց, վոր բեկում են ներկան,
Իրենց գործով անդուլ հերոսական ու վեհ:

Հ. Պ.

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

ՆՈՐ ՅԵՐԵՎԱՆԻՆ

Պայծառ շողերը գարնան արևի,
Բերկրանք են սփռում ծաղկող քաղաքին. —
Որերը տեմպոս թափի ու կամքի,
Նոր տեսք են տալիս հին Յերևանին:

Հաճույք ու բերկրանք — մաքառում այնքան,
Անդուլ աշխատանք, կերտում, կառուցում. —
Պիրկ մկանների ույժը հաղթական,
Անհուն կարոտով նոր կյանք ստեղծում:

Փոշոտ դեմքերի են հին քաղաքում
Ել ինչէր ասես, վոր չեն մարմնանում. —
Գործարան, թատրոն, տրամվայ վոլորուն,
Լույսերի մի ցանց — հույզերի գարուն:

Տեսնում եմ շուրջս մի կյանք կա յեռուն,
Սլաթե խոյանք գործն ամենի —
Տենդ ու շեշտագին գարուն ե, գարուն,
Յերևանը հին ել են չե հիմի...

Կարող փայլալայանք սրտիդ այնքան մոտ,
Քաղցր թովչանքի համասփյուռ կայծեր —
Ո՛ր, ինչպես սիրով ծանոթ, անծանոթ
Մեր նորեկ կյանքի ուղին են անցել:

Ժպիտ ու ծիծաղ բոլոր սրտերում,
Առնական սերունդ վարդի պես փթթող —
Հաղթական վերելք Լենինի յերկրում,
Հիդրոկայաններ — մեր կամքը կերտող...

... կարոտած տենչը ներկա յե դարձել,
Իսկ ներկան հզար թոխչքներ ունի. —
Ապագան հրոտ մեր դեմ ծառացել,
Յեվ վաղքն այսոր ել սահման չունի:

Մեր կյանքը կարող և խոր և անափ,
Պայքարի ծոցում խոյանք ե հրկեզ. —
Մեր միաքն այրող՝ հրեղեն տարափ,
Արևից ել վառ — կարմիր վողջակեզ:

ԹԵՈՂՈՐ ՖՈՆ

ՅԵՐԳ ԿՈՄՍՈՄՈՒՆԻ ՄԱՍԻՆ

Արևավառ վորպես կեսոր,
Հասուն, վորպես արտերը վառ,
Հաղթանակիդ մասին ետոր
Յերգ եմ ասում պայքարավառ:

Գոռ մարտերում այն քո անցած
Տարար անթիվ հաղթանակներ,
Աշխարհի վողջ դեմքը ցանցած,
Յեղար հպարտ ու աններեր:

Պայքարեցիր թափով առատ
Կուսակցության դեկի ներքո,
Հերոսի պես դիրքեր առատ,
Հերոս դարձար հատու յերգով:

Հիմա, յերբ վառ մեր որերում
Վերեք ունենք ու հաղթանակ,
Լսվում ե հաղթ ու պայքարուն
Կոմսոմոլի յերգն անահ:

Թե վոր կովի գա թշնամին,
Պայթի նրա ուումբը դաժան,
Պատրաստ ե քո բանակը ժիր
Ամեն ըոպե, ամեն մի ժամ:

Լենինյան հաղթ դրոշի տակ
Հերոսական յերգով հատու,
Բազմամիլյոն կամքով արի,
Քայլում ես դու անվհատում:

Կոմսոմոն իմ կարմրագրոշ,
Բազմամիլիոն ու առնական—
Քայլում ես դու ղեպի գրոհ
Հաղթանակի թափով անկանդ:

Իսկ յես վորպես պոետը քո,
Քո հարազատ վորդին ջանել,
Քո շարքերի թափի համար,
Պայքարախոս յերգ եմ բերել:

Ո՛ր, կրկին դեռ վորպես կետոր,
Հասուն՝ վորպես արտերը վառ,
Հերոսներից մասին ետոր,
Յերգ եմ ասում պայքարավառ:

ԴԱՐՈՒՐԻ

Մ Ե Ք Ե Ն Ա Յ Ի Ս

Ձան մեքենա, ախպեր ջան,
Իմ հարազատ վեհ ընկեր,
Քո շոփնդը ձուլվում ե
Իմ յերգի հետ աներեր:

Ձան մեքենա, աշխատիր,
Հարվածային ընկեր ենք —
Ելեկարական սրտով մեր,
Փշոտ ձամբեն հարթել ենք:

Անբաժան իմ մեքենա
Շաչիդ, շառաչիդ մատաղ,
Ո՛ր, յերբ պտույտ ես գալիս,
Սրտիս կորով ես տալիս:

Կյանքը մեր նոր յերկրում՝
Հրաշունչ իմ մեքենա,
Չնաշխարհիկ ե գառնում
Մեծ պայքարումս անահ:

Ելեկարական քո սրտով
Իմ սիրտն ել ես դու վառել,
Հետ չմնանք մեքենա —
Մեր կյանքն անիվ ե դառել:

ՍԻՐՈՒՄ ԵՄ ՅԵՍ

Յես սիրում եմ գործարանում աշխատել,
Դազգյահի մոտ մուրճերովս հարվածել.
Սիրում եմ, վոր իմ այս յերգը վիթխարի,
Չուլվի ըմբոստ լերգ ու կանչին մաշինի:

Յես սիրում եմ աշխատանքը բանվորի,
Յես ծնվել եմ աշխատանքում այն բոսոր —
Յերգվել եմ յես լինել մարտիկ նոր որի,
Նորակառույց կարմիր կյանքի մի զինվոր:

Գործարանի աշխատանքն
Ինձ վառ ավյուն է տալիս,
Գործարանն ինձ համար միշտ.
Անխոնջ յերգ ու մուսա:
Գործարանի սուլոցն իմ
Սիրտն է զարթնացնում,
Գործարանը մեր տունն է,
Ու ապագան արեկա:

Շառաչում են դազգյահները,
Վորտում են ամեն ոք,
Տրակաորները ստեպներում
Յերգ են յերգում յերկաթե:
Բազմանում են գործարաններ,
Նոր տիտաններ կառուցվում,
Ու մեր ճամբան թեկուզ պայքար,
Պողպատներով են մայթում:

Գ Ա Զ Ե Լ

Վորպես արև ծիրանային լույս յերեսով,
Նորն ես բերել նոր ուժերով, վառ, հրաշունչ —
Քո այտերից վոսկեփրփուր շողն է կաթում,
Ջահել աղջիկ, այս աշխարհում ումն ես սիրում:

Յես գեղջկուհի ջահել աղջիկ արևակեզ,
Ինձ պահել են թարմ ուժերով դաշտերը լայն —
Նորը ինձի կյանք է տվել այս աշխարհում,
Ու կանչում են յերգերն ուրախ սավետական:

Սիրի՛ր նրան, ով սիրում է քրախքը լի,
Ով կովում է հողերի հետ, վոր հաց բերի —
Նա է միայն կյանքը կոփում որերում վառ,
Ուզիր նրան, վոր քեզ համար նոր կյանք բերի:

Վորպես արև ծիրանային լույս յերեսով,
Նորն ես բերել նոր ուժերով, վառ, հրաշունչ —
Քո այտերից վոսկեփրփուր շողն է կաթում,
Ջահել աղջիկ, այս աշխարհում ումն ես սիրում:

ՄԵՐ ՆՈՐ ԳՅՈՒՂԸ

Դու ել նման չես նախկին հին գյուղին,
Մթնած, մոլորված գիշերվա նման.
Դու ել նման չես խոր, մութ նկուղին,
ինչպես անցյալում անձեն ու խավար:

Վորքան տարիներ խավարի ծոցում
Գետնափոր տան մեջ կյանքեր են մաշվել.
Վորքան տարիներ չոր գետնի վրա,
Հեքյաթ ես պատմել հին—հին դիվական:

Յեվ անհետ, խավար տարիներ ընդմիշտ,
Շատ-շատ որեր են անցել, գնացել.
Գոմերի միջին ճրագների տակ,
Վորքան անողուտ ժամեր են անցել:

Ել ով ե խոսում ճրագի մասին,
Յերբ հիզրոններն են յելել մեր յերկրում,
Ել ով ե հիշում արորի մասին,
Յերբ տրակտորն ե դաշտերը հերկում:

Կոխոզնիկները համայն ուժերով
Վարում են, ցանում սրտով յեռանդուն,
Յերկաթն ե գնդում կոխողի դաշտով.
Բյուրավոր վողջճն, տրակտոր, քո դարուն:

ՅԵ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՊԱՏՄԵԼ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ — ԴԱ ՅԵ ՄԵՐ ՌԵԱԼԻԶՄԸ

Բանվոր դասակարգն իր արվեստն ու գեղարվեստը,
միաժամանակ իր վողջ կուլտուրան ձեռք ե բերում, ավելի
ճիշտ՝ ստեղծում ե դասակարգային պայքարով, այն մեծ
կռվում, վոր բոլոր շահագործվողները մղում են ընդդեմ շա-
հագործման:

Այլ կերպ ասած, նա պրոլետարական հեղափոխական
ամենախոշոր զենքերից մեկն ե, վորի ոգնությամբ բան-
վոր դասակարգը վերակառուցում ե գոյություն ունեցող
դասակարգային հասարակությունը:

Գեղարվեստը դասակարգային պայքարի հոգևոր զեն-
քերից մեկն ե, վորի գործադրությամբ, պրոլետարիատն
արմատական վերակառուցման ե յենթարկում մարդկային
հոգևոր կուլտուրան: Պրոլետարիատի վերակառուցված հո-
գևոր կուլտուրան (դաստիարակված հեղափոխական պրո-
լետարիատը) կրկնապատկում ե բանվոր դասակարգի հեղա-
փոխական յեռանդը, ամրացնում ենրա շարքերի կազմակերպ-
վածությունը՝ ավելի սերտորեն ե ընդհուպ մտացնելով
պրոլետարական ե կիսապրոլետարական դանդաղներին:

Պրոլետարական խորհրդային գրականությունը մի մասն
ե ամբողջ պրոլետարական կուլտուրայի: Այդ գրականու-
թյունն ստեղծվում ե դասակարգային կռվում, ծառայում
ե նրա շահերին ե ինքն իր հերթին՝ դասակարգային սրված
կռվի ճակատ ե հանդիսանում:

Ընկեր Լենինը շատ բարձր գնահատական էր տալիս գեղարվեստական գրականության և շեշտում նրա մեծ նշանակությունը: Նա պահանջում էր ամեն մի խորհրդային բանաստեղծից՝ ամուր կանգնել պրոլետարիատի հեղափոխական տեսակետին ու սեփական գրչով շոշափելի ոգուտ բերել նրա մեծ ու փառավոր պայքարին՝ ընդհանրապես, սոցիալիստական շինարարությանը՝ մասնավորապես:

Բանվոր դասակարգն ամենահեղափոխականն է, վորին ստեղծել է ժամանակակից կապիտալիզմը:

Նրան է վիճակվել դասակարգային հասարակության ընդմիջտ և լիակատար վոչնչացումը և սոցիալիզմի կառուցումը:

Ահա թե ինչու մարդկային և ժամանակակից բուրժուական վողջ կուլտուրայի լավագույն միակ ժառանգը յեղել է և կարող է լինել ամենահեղափոխական ու առաջադեմ պրոլետարիատը:

Այստեղից Մարքսը, Ենգելսը, Լենինն ու Ստալինն ամենայն լրջությամբ և սրությամբ շեշտել են, վոր միայն պրոլետարիատը կարող է շարունակել ու զարգացնել մարդկային բովանդակ կուլտուրան և գրականությունը:

Հետևապես, ամեն մի բանաստեղծ, վորն ուզում է լինել ժամանակակից առաջավոր պրոլետարական կուլտուրայի գրողը, ավելի ճիշտ՝ արտահայտիչը, ով ուզում է անսահմանորեն զարգացնել իր բոլոր կարողությունները, նա պետք է ամբողջովին ու առանց յերկմտանքի կանգնի պրոլետարիատի, նրա ավանգարդի — կոմունիստական կուսակցության հեղափոխական տեսակետին: Նա պետք է մեր հեղափոխական մեծ կովի ալտիվ մասնակցողը լինի և իր արվեստով կոնկրետ ոգուտ բերի պրոլետարիատին: Այս բանի համար հենց Լենինն անչափ հարգում ու բարձր էր գնահատում Մաքսիմ Գորկուն՝ վորպես տաղանդի, գործիչի և մարդու:

Լենինը չէր կարողանում սառնասիրտ վերաբերվել «Փռագամոլ» և «ուռա՝» կանչող հեղափոխական գրողներին: Նա պահանջում էր գրողից չկեղծել, լինել սոցիալիստ-ռեալիստ, տալ ժամանակի ամենաիրական ու ճիշտ իմաստը, գծերը, դասակարգային պայքարի բուն յուրահատկությունները. ոգնել բարձրացնելու ու հաղթանակելու ժամանակակից ամենահեղափոխական և ամենաառաջադիմական հասարակական ուժին — պրոլետարիատին:

«Փռագամոլության» և կեղծիքի մեջ Մարքսը, Ենգելսը և Լենինը տեսնում էյին արվեստը խախտող ու բռնազրուսիկ դարձնող աղաղակող մի վտանգ:

Մեր կուսակցության մարտական որգան «Правда»-ն, իր ժամանակին, պրոլետարական հասարակայնության ուշադրությունը սրեց սոցիալիստական ռեալիզմի մեթոդով գրելու հարցի վրա, խորհրդային գրականության մեջ:

Մեր գրաքննադատությունը, դեռևս չի կարողացել լիակատար ոգտագործել Մարքս — Լենինյան գրաքննադատական ուսմունքը, խորհրդային գրականության զարգացման համար: Դեռ ավելին: Գրական կազմակերպությունների նախկին ղեկավարներից վոմանք, դեբորինյան դպրոցի ազդեցության տակ, պայքարում էյին Պլեխանովյան ուղղափառության (ортodoxия) համար եստետիկայի բնագավառում ու մոռացություն էյին տվել Լենինյան հարուստ ուսմունքը, պրոլետարական արվեստին վերաբերյալ:

Սոցիալիստական շինարարության ներկա ետապում, շատ են ու մեծ այն խնդիրները, վորոնք դրված են խորհրդային ծաղկող գրականության դիմաց: Ահա թե ինչու հատկապես հիմա, յերբ հեղափոխական պրոլետարիատն յուրացնում և ամրացնում է նաև իր գաղափարական դիրքերը, հսկայական նշանակություն է ստանում մեր ուսուցիչները՝ Մարքսի, Ենգելսի, Լենինի և Ստալինի ուսմունքը՝ գրականությանը տված նրանց ցուցմունքների անշեղ իրագործումը: Միայն Լենինյան լույսի տակ հնարավոր է այս կամ այն գրական խնդրի անաչառ և ճիշտ քննարկումը: Այդ ցուցմունքները հիմնականում հանգում են սոցիալիստական ռեալիզմի մեթոդի հետևողական անցկացմանը, գրական ստեղծագործությունների մեջ:

Սակայն ի՞նչ է նշանակում սոցիալիստական ռեալիզմ:

Անշուշտ մեր ուժերից վեր է լրիվ պատասխանել այդ հարցին, բայց հարցի դրման համար կարող ենք մի քանի հիմնական դիտողություններ անել:

Լենինը մարքսիզմի մասին ասել է, վոր՝ «Մարքսի ուսմունքն ամենագոր է, վորովհետև նա ճիշտ է: Նա ամբողջական է ու ներդաշնակ, տալով մարդկանց այնպիսի աշխարհահայացք, վորն անհաշտ է ամեն մի սնահավատություն, ամեն մի ռեակցիայի, բուրժուական ամեն մի ճրնչման պաշտպանություն հետ»*:

* Ленин - Три источника и три составных части Марксизма т. XVI стр. 349

Սոցիալիստական ռեալիզմը պահանջում է մեզանից, վորպեսզի ճիշտ արտահայտել իրականությունը: Մորհրդային գրողը պետք է ներքին կապ տեսնի «արտաքին» բովանդակության մեջ, խնդիրները, յերևույթները վերցնե վոչ միայն տվյալ մոմենտի տեսակետից, այլ և հեռանկարում, ուրիշ բազմաթիվ յերևույթների կապակցությամբ: Ճիշտ գաղափար տալ մեծ, հեղափոխական, հարուստ անցքերով լի եպոսայի մասին: Այս խորհրդային յուրաքանչյուր գրողի ամենամեծ պարտականությունն է:

Չկեղծել, միևնույն շաբլոնով չմոտենալ բոլոր յերևույթներին. փրոն խոսքեր շուայելով, չմոռանալ մեր կյանքի պայքարի հիմնական յուրահատկությունները, չցատկել կոնկրետ իրականությունից դեպի վերացական աշխարհը: Վորովհետև կյանքը, ճշմարտությունը, նրա կոնկրետ փաստերը, նույնիսկ ստորերկրյա ուժերը սոցիալիզմի, պրոլետարիատի — այդ միակ հեղափոխական դասակարգի — կազմակերպված պայքարի հաղթանակի ոգտին են գործում:

«Մարքսի թեորիան որյեկտիվ ճշմարտություն է, վորը կայանում է հետևյալում. — գնալով Մարքսի թեորիայի ուղիով, մենք միշտ ավելի ու ավելի կմոտենանք որյեկտիվ ճշմարտությանը (յերբեք չսպառելով այն), գնալով ամեն մի ուրիշ ճանապարհով մենք չենք կարող հասնել վոչնչի, բացի խառնաշփոթության և կեղծիքի»:^{*}

Ճշմարտությունը վեր է բարձրացնում, ուժ ու յեռանդ է ներշնչում պրոլետարիատին՝ ընդդեմ կապիտալիստական իրականության: Մարքսը կարողացավ ստեղծել կապիտալիզմի հիմքերը ցնցող մատերիալիստական դիալեկտիկան, վորովհետև նա մինչև արմատները բացեց կապիտալիստական իրականության ճշմարտությունն իր բոլոր կապերով: Նա ցույց տվեց կապիտալիստական շահագործումը, վորը քողարկված էր առարկաների, վոսկու, փողի փայլով, ծածկված էր իրերի թաղանթով, սպրանքային փոխանակային կապերի ու հարաբերությունների «ագատ» և «արգարացի», անհատների իրավական շահերի իրակատար «հավասարության» մշուշով:

Գրական-գեղարվեստական ռեալիզմն ունի իր յուրահատուկ կողմերն ու գծերը: Մորհրդային գրողը պատկերների միջոցով է գրսեվորում սոցիալիստական մեծ շինարարության պատմական ճշմարտությունը: Միայն

խորհրդային-պրոլետարական գրողը, վորպես ռեալիստ գրող, կարող է անվախորեն բացել ամբողջ աշխարհի դիմաց կյանքի ճշմարտությունը, գրել հասարակության զարգացման իրական անցքերի դինամիկան, շարժումը: Գրականության զարգացման ներկա ետապում, անհրաժեշտ է սոցիալիստական ռեալիզմի ուղիով ստեղծել գրական տիտաններ: Մենք պետք է վերջ տանք սոցիալիստական շինարարություն միայն արտահայտելու գրական պրակտիկային: Հարկավոր է գրականության մեջ դրսեվորել մեր սոցիալ-քաղաքական, տնտեսական կյանքի առաջխաղացումը կոնկրետի և վերացականի, առանձինի և ընդհանուրի միասնության պահպանմամբ:

Մի շարք գրողներ, սոցիալիստական ռեալիզմի խնդիրները թերագնահատում են: Նրանք ուղղակի բացականում են, թե «գրաքննադատությունն առաջ գրողից պահանջում էր դիալեկտիկական մեթոդով գրել, իսկ հիմա պահանջում է գրել սոցիալիստական ռեալիզմի մեթոդով, վոր իբր թե դիալեկտիկական մեթոդն անկեսունակ գտնվեց գեղարվեստի ասպարեզում և այլն»:

Վոմանք ել կարծում են, թե գրաքննադատությունը վոչ մի նորություն չի ասում, վոր սոցիալիստական ռեալիզմի պրոբլեմը նույնն է, ինչի մասին վաղուց արգեն գրել ու խոսել են մեր գրաքննադատները, միայն այն տարբերությամբ, վոր այն ժամանակ ասվում էր դիալեկտիկա, իսկ այժմ սոցիալիստական ռեալիզմ և այլն:

Այստեղից յեխելով տեսնում ենք, վոր՝

1. Առաջինները գրական սոցիալիստական ռեալիզմը հակադրում են դիալեկտիկային: Իրականում չի կարելի սոցիալիստական ռեալիզմի մեթոդը հակադրել դիալեկտիկական մեթոդին: Սոցիալիստական ռեալիզմի մեթոդը գեղարվեստական գրականության մեջ՝ հենց Մարքս — լենինյան դիալեկտիկական մեթոդի կոնկրետացումն ու յուրահատուկ կիրառումն է պրոլետարական գաղափարախոսական պայքարի հիշյալ ճակատամասում:

2. Յերկրորդները նույնացնում են սոցիալիստական ռեալիզմը (վորը խորհրդային գրողի մեթոդն է) Մարքս — լենինյան դիալեկտիկական մեթոդով դիալիզմը՝ ընդհանրապես: Ճիշտը՝ սրանք շաբլոնացնում, գոեհկացնում են դիալեկտիկան, կարծելով թե դիալեկտիկական կիրառումն ստանդարտ ձև ունի, վորից դուրս դիալեկտիկա չկա:

Այս տեսակետները նպատակ ունեն ժխտելու Մարքսի, Ենգելսի և Լենինի կողմից գրաքննադատութեան ասպարեզում ղեկավարիկայի յուրահատուկ կիրառման փաստը: Սոցիալիստական ռեալիզմի ուղին՝ ղեկավարիկական համապարփակ մեթոդի մի կոնկրետ ձևն է, վորը դրսեվորում է խորհրդային գրականութեան և գրաքննադատութեան ասպարեզում Մարքս-լենինյան ղեկավարիկական կիրառելով:

Նշած յերկու տեղեկանքներն էլ միևնույն ներքին իմաստն ունեն, չնայած իրենց արտաքին տարբերութեան: Նրանք խաչաձևում են Մարքս-լենինյան ամբողջ ուսմունքի և գրաքննադատական ժառանգութեան հետ:

Մարքս-լենինյան գրաքննադատական ժառանգութեանը մեր ուսումնասիրութեան առարկան պետք է լինի: Անհրաժեշտ է ոգտագործել նրանց ամբողջ ուսմունքը բոլոր գույնի մեխանիստներին և իդեալիստներին հակահարվածելու և խորհրդային գրականութեանն առաջարկելու համար:

Սոցիալիստական շինարարութեանը կոնկրետ ճշմարտութեանն է: Այդ մեծագույն ճշմարտութեան գովերգն արտացոլելը գրողի մեծագույն պարտականութեանն է:

Սոցիալիստական ռեալիստ գրողը, պետք է գրի ճշմարտութեան մասին, կոնկրետ իրականութեան մասին, տեսնի այդ իրականութեան մեջ հեղափոխական պրոլետարիատի դերը և կանգնած լինի նրա տեսակետին: Կիրառելով իսկական ռեալիզմը, նա անխուսափելի կհանգի պրոլետարիատի հեղափոխական տեսակետին:

Պրոլետարական ռեալիստը պետք է ըմբռնի, վոր մատերիալիստի համար աշխարհը հարուստ է, կենդանի յե, բազմատիպ է՝ քան նա թվում է, վորովհետև «գիտութեան զարգացման յուրաքանչյուր քայլը նրանում նոր կողմեր է բացում»:^{*}

Վեր ճշմարտութեանը կազմվում է՝ «յերևույթի իրականութեան բոլոր կողմերի ամբողջութեանից և նրանց (փոխադարձ) հարաբերութեանից»:^{**}

Վոր «ընդհանուրը գոյութեան ունի միայն առանձինի մեջ, առանձինի միջոցով»:^{***}

Գնալով սոցիալիստական ռեալիզմի մեթոդի կենսագործման ուղիով, խորհրդային գրողը, պետք է կարողանա

պատկերել մեր հարուստ կյանքի — սոցիալիզմի կառուցման ընթացքը, վոր միայն վորպես ընդհանուր որինաչափութեան, վորպես ընդհանուր վոգևորութեան հետևանք, այլ ինչպես առանձին յերեոյթներէ դրսեվորում: Պետք է ցույց տալ վոր միայն ովկիանոսը, այլ և այն, թե ինչպիսի ծովերից է գոյացել այդ ովկիանոսը, վոր միայն գետը, այլ այն, թե ինչ գետակներից և առվակներից է գոյացել գետը և այլն: Մեր գրողներից վոմանք, հատկապես Հյուսիսային Կովկասի յերիտասարդ հայ խորհրդային գրողները՝ Ա. Հովհաննեսյանը, Ա. Սաչենցը, Ո. Վարոսյանը և ուրիշները դեռ չեն գտել այն թելը, չեն կանգնել սոցիալիստական մեթոդի ճիշտ անցկացման հողի վրա, վորպեսզի կարողանան տալ մեր իրականութեան ճիշտ պատկերը և իսկական գծերը: Առայժմ կարելի յե ասել, վոր այս ընկերների մոտ, ընդհանուր վոգևորութեանը գերազանցում է կոնկրետ — ռեալիստական ստեղծագործութեանը: Նրանք տալիս են հարվածայինի տիպը, սոցմրցումը, մասսաների արտադրական — հեղափոխական անուրի յեռանդն՝ ընդհանրապես: Սակայն մեր կյանքի այս ընդհանուր հատուկ գիծը, վոր մենք ունենք, գոյութեան ունի կոնկրետ, կենդանի մարդկանց միջոցով, սոցիալական խմբակների միջոցով, արտադրութեան մեջ, սոցիալիստական շինարարութեան մեջ:

Մենք կասենք, վոր սոցիալիստական ռեալիզմի ուղղութեամբ մեծ քայլ է արել ընկ. Աշոտ Լուսինցը՝ իր «Ձիերը խրինջում են» փոքրիկ, բայց գոհարիկ աշխատանքով: Ահա ինչպես են գրում և ինչպես կարելի յե գրել սոցիալիստական ռեալիզմի մեթոդով:

Սոցիալիստական շինարարութեան ճշմարիտ պրոցեսը գրականութեան անսահման աղբյուրն է: Այդպիսի աղբյուր չունի և չի կարող ունենալ բուրժուական մեռնող գեղարվեստը և վորջ «բաղաքակիրթ» միտքը:

Միլիոնավոր հարվածայինների, սոցիալիզմի ակտիվ շինարարների արտադրական ստեղծագործութեանը, սոցիալիստական շինարարութեան իրական պրոցեսն է: Այդ պատճառով, սոցիալիստական ռեալիզմի պահանջը գրողին պարտադրում է արտահայտել կենդանի մարդկանց հոգեբանութեանը, տալ նրանց տիպերը պրակտիկ գործունեյութեան հիման վրա: Չի կարելի տիպերին սալ, կտրելով նրան սոցիալիստական շինարարութեան նյութական հիմ-

* Ленин.—т. XII стр. 55

** Ленинский сборн. IX стр.229

*** Ленин—,К вопросу о диалектике"

քից: Նույնպես չի կարելի տալ իրականութեան պատկերը, առանց կենդանի հասարակական մարդկանց:

Միանգամայն սխալաստիկա յե, չորութեանից խոնավացած վեճ ե՝ «կենդանի մարդու» լուրճագի, «պսիխոլոգիզմի» կողմնակիցների վեճը, վորոնք չեն տեսնում առանձին մարդու և ամբողջ հասարակութեան անքակտելի միասնութեանն ու տարբերութեանը: Չեն հասկանում, կամ ձեւացնում են, վոր չեն հասկանում, վոր մարդու բնութեանը հասկանալու ուղին՝ հասարակական արտադրական հարաբերութեանները վերլուծման հասկանալու միջոցով ե անցնում, ըստ վորում գրական արվեստի միջոցով այդ գործը գլուխ ե գալիս չափազանց բարդ և նուրբ յեղանակներով:

Մեր յեւակետը կենդանի մարդը չե. այդպիսի առումով մարդը տկլոր, անբովանգակ բան ե: Մեր յեւակետը սոցիալիստական շինարարութեան որչեւտիվ ընթացքի ճիշտ պատկերացումն ե, վորը գրողին կհասցնի մինչև կենդանի մարդուն պատկերելու բարձրութեանը:

Սոցիալիստական սեւալիզմի ուղին, մեր եպոխտի անաչառ, ճիշտ դրսեվորման ուղին ե:

* * *

Բուրժուական գրականութեանն անցել ե իր սեւալիստական եպոխտով: Բուրժուական գրողներն, իրենց գրիչներով ոգնեցին կապիտալիստական հասարակակարգի հաստատմանը և բուրժուազիային ոժանդակեցին կործանելու ավատական կարգերը: Ուժ ու վստահութեանից ներշնչված, բուրժուական գրողները չվախեցան «ուղիղ» նայել կյանքի աչքերին, և որչեւտիվ քննադատութեան յենթարկեցին պատմականորեն մեռնող հասարակակարգերը: Սոցիալիզմի մեծ ուսուցիչները շեշտել են սեւալիզմի խոշոր տեղը գրական-բանաստեղծութեան մեջ:

Ֆ. Ենգելսը, 1888 թվին, բանաստեղծուհի Մարգարիտե Գարլինիսին՝ վերջինիս «Քաղաքային աղջիկ» գրքի առթիվ գրած նամակում, ասում ե հետևյալը. «Այն, ինչ առանձնապես իմ աչքին ընկավ ձեր պատմվածքում սեւալիստական ճշմարտութեան հետ մեկտեղ — այդ իսկական բանաստեղծի համարձակութեան հայտնաբերումն ե:

Իուր զգում եք, վոր կարող եք պատմել հին պատմութեանը, վորովհետև ընդունակ եք վերականգնել նրա շարդրութեան ճշտութեանը»:

Բայց միայն ճշմարտութեանն ասելով չի նշանակում պրոլետարական սեւալիստ լինել, վորովհետև «իմ կարծիքով, — գրում ե Ենգելսը — բացի մանրամասնութեանների ճշտութեանից, սեւալիզմը յենթադրում ե նաև տիպիկ անձերի և անցքերի ճիշտ տալը: Իսկ տիպիկ անցքերն այդ պատմվածքում բացակայում են, վորովհետև բանվոր դասակարգը հանդես ե յեկել վորպես մի պասսիվ մասսա:

Բանվոր դասակարգի հեղափոխական հարվածը նրա շրջապատին, նրա կիսագիտակցական և գիտակցական փորձերն՝ իր մարդկային իրավունքները ձեռք բերելու համար, պատմութեան մի մասն ե հանդիսանում, և կարող են պահանջել իրենց տեղը սեւալիզմի ասպարեզում»:

«Յես ձեզ մեղադրելու մտքից հեռու յեմ, վոր դուք չեք գրել մաքուր սոցիալիստական պատմվածք, վորտեղ ինչպես մենք՝ գերմանացիներս եք ասում՝ միտումավոր կերպով (тенденциозно) փառաբանվելին հեղինակի սոցիալ — քաղաքական գաղափարները... Այն սեւալիզմը, վոր յես աչքի առաջ ունեմ, յերևան ե գալիս անկախ հեղինակի հայացքներից: Թույլ տվեք մի որինակ բերել: Բալզակը, վորին յես ավելի մեծ գեղարվեստագետ սեւալիստ եմ համարում, քան ամբողջ անցյալի, ներկայի և ապագայի Չոլիան, իր «Մարդկային կատակերգութեան» («человеческая комедия») գրվածքի մեջ՝ նկարագրելով բարբերը խրոնիկայի ձևով, տարեց-տարի, սկսած 1816 — 1848 թ. թ. բարձրացող բուրժուազիայի խստացող ճնշումն ազնվական հասարակութեան վրա, վորը կարգի յեկավ 1815 թ. և նորից հնարավորութեան չափով՝ վերականգնեց հին Ֆրանսիական քաղաքականութեան դրոշը, մեզ տալիս ե Ֆրանսիական հասարակութեան ամենանրաշալի սեւալիստական պատմութեանը...»

Այդ կենտրոնական պատկերի (կործանվող ազնվականութեանը և բուրժուական կինը. Յե. Բ.) շուրջը նա կենտրոնացնում ե Ֆրանսիական հասարակութեան ամբողջ պատմութեանը, վորից նույնիսկ տնտեսագիտական մանրամասնութեանների մտքով յես ավելի շատ բան իմացա, քան այդ շրջանի բոլոր պրոֆեսիոնալ տնտեսագետների, պատմագետների, ստատիստիկների բոլոր գրքերից: Ճիշտ ե, Բալզակը լեգիտիմիստ եր քաղաքական տեսակետից (այսինքն որենքով արդարացնում եր յեղած կարգերը Յե.Բ.): Նրա մեծ ստեղծագործութեանը բարձր հասարակութեան ան-

խուսափելի անկման համար անաչառ իլլյուզիա յեր, նրա համակրանքը մահվան դատապարտված դասակարգի կողմն եր, բայց և այնպես նրա յերգիծաբանությունը (camura) չի յեղել շատ սուրը, նրա հեգնանքը շատ դառը, քան այն ժամանակ, յերբ նա ստիպում եր ազնվական տղամարդկանց և կանանց գործել, վորոնց նա շատ եր համակրում: Միակ մարդիկ, վորոնց մասին նա չթագցրած հրճվանքով ե խոսում, այդ նրա ավելի վոխերիմ թշնամիներն ելին, հանրապետական հեթանոսները, մարդիկ, վորոնք այն ժամանակ (1830 — 1836 թ. թ.) հանդիսանում ելին ժողովրդական մասսաների իսկական ներկայացուցիչները:

«Այն, վոր Բալզակը ստիպված եր դեմ գնալ իր սեփական դասակարգային համակրանքին յեվ փաղափական նախապաշարմունքներին, այն, վոր նա նկատեց իր սիրեցյալ ազնվականների անկման անխուսափելիությունը յեվ նկարագրեց նրանց, վորպես անարժան մարդկանց, այն, վոր նա տեսավ ապագայի իսկական մարդկանց այնտեղ, վորտեղ նենց կառելի յեւ նրանց զսնել, այդ յես համարում եմ ռեալիզմի խոշորագույն հաղթանակներից մեկը, ծերուկ Բալզակի ամենամեծ առանձնահատկություններից մեկը» (Ենգելս):

Խորհրդային գրականությունն իր պատմական և դասակարգային իմաստով ավելի բարձր և հետևողական մարտնչող ռեալիստական ե: Բուրժուական շրջանակներում հրնարավոր չե այդպիսի ռեալիզմի իրագործումը, վորովհետև բուրժուազիայի տեսակետին կանգնած գրողը չի կարող մինչև վերջ որչեպտիվ լինել: Ընդհակառակը, վորոշ եպոխայում, նրանք ամբողջապես զեն են շարտում ռեալիզմի ամեն տեսակ տրադիցիաներ և չորս վտոներով կանգնում միստիցիզմի, կեղծիքի ուղու: Բուրժուական գրականությունը չտվեց գյուղացու կյանքի զարգացման ճիշտ պատասխանը: Բուրժուական տեսակետին կանգնած բանաստեղծը չի կարող, և վոչ միայն չի կարող, այլև ան ու սարսափից չի ցանկանա նայել կապիտալիստական իրականության աչքերին, և պատմել ճշմարտությունը: Այստեղից՝ կեղծիք, ցնդաբանություն ու սնամեջ յերևակայություն, այստեղից՝ և Ֆիլիստերականություն և՛ չոր սիմվոլիզմ...

Ահա՛ սրանումն ե բուրժուական ամբողջ մտքի և գեղարվեստի անկման—փտման հիմնական պատճառը:

Բուրժուական գրական-գեղարվեստի անկումը, փտումը ավելի ակնհայտ ե դառնում կապիտալիզմի ընդհանուր տնտեսական ճգնաժամի ֆոնի վրա, յերբ ճգնաժամի բացարձակ սարսափները հիմնահատակ են անում բուրժուական և սոցիալ-ֆաշիստական քարոզները, յերբ յուղի պես ջրի յերես են թռչում բուրժուական բարոյականությունը և գլխի վայր դրած գիտությունները:

Սրան բոլորովին հակառակ ծաղկում և չտեսնված արագությամբ զարգանում ե խորհրդային գրականությունը, սոցիալիստական ռեալիզմը:

Խորհրդային գրականությունը, գյուղի կոլեկտիվացման խոշոր պատմական նշանակութուն ունեցող ճշմարտության զբսեվորման հիման վրա, հավերժացնում ե գյուղական կյանքի սոցիալիստական վերակառուցման հոյակապ պատմությունը, վորն ստեղծվում ե մեր կուսակցության և մեծ առաջնորդ ընկ. Ստալինի ղեկավարությամբ:

Մեր կուսակցության ղեկավարությամբ մարդկության համար նոր կյանք, նոր պանծալի պատմություն ե ստեղծվում: Մենք պետք ե անկեղծորեն ամբողջ աշխարհին պատմենք սոցիալիստական շինարարության այդ մեծագույն ճշմարտությունը:

Խորհրդային գրականությունը տվել ե այնպիսի խոշոր սոցիալիստ-ռեալիստի, ինչպիսին Մ. Գորկին ե: Մեր գրականությունը տվել ե սոցիալիստական ռեալիզմի հանձարեղ, լավագույն նմուշներ, ինչպիսին ե՝ Շոլոխովի «Վարած խամը» («Поднятая челядь») և այլն:

Սովորել սոցիալիստական ռեալիզմը Մաքսիմ Գորկուց, մեր գրականության լավագույն նմուշներից, և անվախորեն պատմել ճշմարտության մասին, սա յե խորհրդային գրողի, ներկա ղեպքում սկսնակի զարգացման, նրա բեղմնավոր ստեղծագործության ուղին:

Պատմել ճշմարտության մասին—դա յե սոցիալիստական ռեալիզմի ուղին:

Գնալով այդ ուղիով, մենք ավելի բազմակողմանի և ճիշտ կճանանչենք աշխարհը և կհանգենք մարքսիզմին—լենինիզմին ու կստեղծենք ավելի բարձր և հարուստ պրոլետարական կուլտուրա:

ԲՈՎԱՆԳԻՍԿՈՒԹՅՈՒՆ

1. Սկիզբ	
Արոն Հովհաննեսյան. <i>Սովետական Ուժեղակներ</i>	3
» » * *	4
2. Անցյալից	
Հ. Ավագյան. <i>Մահապատիժ (Հուշեր արարական ապստամբությունից)</i>	5
Հ. Պ. * *	20
Գ. Մ. Այն որերից մեկը	21
Արսեն Խովհաննեսյան. <i>Յերգ Հոկտեմբերյան նահատակներին</i>	27
3. Հաց	
Հովիկ Հակոբյան. <i>Վորակի տեսուչների մոտ</i>	30
Թեոդոր Փոմ. <i>Դառնանք մաքուր, կուլուրական</i>	42
» » <i>Տրիտեաներ աշնանացանի հերոսին</i>	44
Ոկտյաբրիմա Վարսյան. <i>Հովաս բիձին</i>	46
Լուսյան. <i>Տբակտորը</i>	48
4. Սովետական լիրիկա	
Գիծոյան. <i>Երեկորոմուրճը</i>	49
Մազով. <i>Ծովի յերգը</i>	51
Հ. Պ. Աշխատանք	53
Թեոդոր Փոմ. <i>Յերգ կոմսոմոլի մասին</i>	55
Դարուբի, <i>Մեքենայիս</i>	57
» <i>Սիրում եմ յես բեզ</i>	58
Ս. Հակոբյան, <i>Դազել</i>	59
» <i>Մեր նոր գյուղը</i>	60
5. Տեսական	
Յեզար Բարսեղյան. <i>Պատմել ճշմարտության մասին— դա յե մեր սեպիզմը</i>	61



3600
A. X.
Ответственный редактор Г. А. ПОТЕНЦ
Технический редактор О. С. Тер-Давыдов
Сдано в набор 15/XII 1933 г.
Подписано в печать 20/I 1934 г.
Статформат : 5 148x210
Уполнрайлита № Б 636
Об'ем 4,5 п. л. Заказ № 6321, Тираж 1000
Типография им. «Стачки 1902 г.» СККПТ
Ростове на-Дону



Գրքի
Цена 1 р. 50 Կոպ.
р. 50 Կոպ.

3394

72.128

СЕВЕРНЫЙ КАВКАЗ

Литературно-художественный
АЛЬМАНАХ С. К. С. П. армян

На армянском языке

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО

ԳՐԱԳՈՒՀԵՍԵՐ

ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ ՄՈՍԿՈՎՍԿԱՅԱ ՓՈՂ. № 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՅԵՆՏՐ)